

Կ. ՊՕԼԻՍ, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ
Զագագերլար, Ակորեան Խան, 19.

ՎԱՀԱԳՆ

ՔԵՐԹՈՒԱԾ Մ. ԱՃԻՄԵԱՆԻ


A
15107



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

—
1871



ՀԻՄՆԱԿ

ԿԵԼԵՍԻԱՆ ԱՆՔԻՆՆԵՐԻ



ԳՐԱԿԱՆ

ՏԱՐԻՔԻ ՊԱՐԿԱՆ

1871

Վ Ա Հ Ա Գ Ն

Դ Ա Ի



Խոնաւ թեւսքըն գիշեր խոյս տայր վաղվաղ ,
Ամենայն լուռ եւ ամենայն էր խաղաղ .
Սիրտ տրտմալից ի մենաւոր վըրանի
Նստէր անձնեայ եւ վարսագեղ պատանի .
էր քաջաղեղն որսորդ , սիրող անտառաց ,
Սարսափ մարտից , որդի քաջի եւ փառաց .
Դոփէր ոտիք եւ գոշէր , « Մարտ անօրէն ,
Ճակատ ընդ Հայս յօրինեւ Մարք ոչ գորեն .
Վայ սիրելւոյս , վայ մըտերմիս Արքակայ ,
Որ ի դաշտին մահու թերեւս անկեալ կայ ,
Եւ ժուժասցեն երկինք զանմեղըս նըկուն ,
Ըզյաղթութիւն տեսանել սեաւ նախանձուն .
Ո՛հ որպիսի մընայ լսել ինձ աղէտ : »
Եւ աստ զԱրմուգ տեսանէ զժեր քըրմապետ ,
Ըզինամակալ արքայորդւոց , վեհափայլ

Վարսիւք ալեօք՝ առ նա դիմէր շուտաբայլ .
Յոտին կացեալ եւ հարցանէր անձկանօք .
« Զի՞նչ ըզմարտէ բերես ինձ բանս , քաջդ Արմուգ »
եւ նա . « Մարաց բանակ մաշեալ ի հայ սուր ,
Ծերք եւ կանայք նըստեալ ողբան յերգ տխուր .
ԶԱշդահակայ արեան վերջին նահատակ ,
Ըզմըտերիմըն քո , Վահագն , զԱրբակ » —
« Մեռաւ Արբակ՝ վա՛հ անձկալին իմ մեռա՛ւ .
Այլ վայ որ ձեռն ի նա մխեաց անիրաւ » —
« Ոչ է մեռեալ , անկաւ եւեթ վիրաւոր ,
Եւ գերեցեալ հեծէ ի բանտ գետնափոր .
Մի վհաաիր դու եւ զսիրտ քո , որդեակ ,
Պնդեալ փութա՛ ընդ իս փրկել ճն զԱրբակ »
Ի՛նչալեբեալ Վահագն անդէն , յարդարէ
Զէնս եւ կախէ զահեղ սուսեր յազդերէ .
Ածէ ի գլուխ ըզսաղաւարտ դիմապահ ,
Նիզակ յաջու՛մ՝ սլատեալ ըզկուրծն ի զըրահ ,
Աշտանակի յաշխոյժ նըժոյգ սըրընթաց ,
« Դիք ընդ մեզ են , ժամս յաջողակ , ծերն ասաց ,
Բանակըն խոնջ ընկողմանեալ կայ ի քուն .
Ե՛կ դու քնդ իս , ուզի ցուցից քեզ թաքուն »
Ընդ զառ ի վայր ոստոյն իջին ի մութ ձոր
Ուր խոխոջեալ զեղցր վըտակ քաղցրածոր .
Յըստուեր մայրեաց թափառեալ ժամըս ձիգ լուս ,
Հասին առ ստն աշտարակի քարակուս .

Յեցեալ ի թուխ և ՚ի սեպածեւ ախափայս ,
« Վահագն , ասաց Արմուգ , ահա սեաւ մուտս այս ,
Բարեկամին քո տանի՛ բունտ ահաւոր .

Մտանել ծերս ընդ այն շիշխեմ , աստանօր
Քեզ մնացից . բայց դու առոյգ եւ արի ,
Հապա մո՛ւտ անդ , Արմուգ զոտիւք քո փարի : » —

« Առ ո՞տս Արմուգ , զայս ինձ մընայր տեսանել .
Հի՛մ պաղատանք , իցէ՞ Վահագն անընդել . . . »
Եւ անհամբեր խիզախ ի մուտն ընթացաւ .

Սոր լըռութիւն մահու պատէ զկամարս սեաւ ,
Փոսք են բացեալ լի ոսկերօք բիւր մարդոց
Յորոց վերայ խըլրտելով սողայ օձ .

Ժայռք ի սարից ժայռից կախեալք տատանին ,
Եւ արհաւիրք մահու ծածկեն զպատանին ,
Շաչեն շրջիցք , ահա լըսին հառաչանք .

Զոր կերկերեալ անդրաձայնեն արձագանդք .
Ունկըն կախէ : — « Ո՛ր Տէր , կարի է ցաւն իմ .
Ազէ՛ տո՛ւր ինձ ըզմահ՛ լաւ է մեռանիմ : »

Եւ կըրկնեցին ըզմահ երիցըս կամարք :
« Արբակ , կարգաց Վահագն , ի քեզ յուսան Մարք ,
Մի ողբար , զն առ իս մատիր անկասկած : » —

« Ո՛ր իցես դու , մահկանացո՞ւ թէ Աստո՞ւած . . .
Ո՛ր իցես դու սր մըտանել աստ իշխես : » —
« Բաջալերեաց , հայկազուն եմ Վահագն ես : » —

« Զի՛նչ լըսեմ Տէր , այո՛ սոյգ ձայն է նորին .
Այլ առ ի՛նչ գայ , խոյս տալ ինձ չէ հնարին .

Եղո՛ւկ զինեւ , փախիր՝ Վահագն , երթ թաքիր ,
Թո՛ղ մեռանել ինձ , ճակատուս այս է զիր .
Զայս հասուցին ինձ Տիգրան հայր քո եւ Բար ,
Նենգեաց Վըշտասպ , յաղթեաց լեզուն սուտախար .
Այլ յաստեղունս արդարութիւն գրեալ կայ ,
Մեռանիմ ես բայց անմեղ , Դիք ինձ վրկայ .
Ոչ ցաւ ի սիրտ այլ երջանիկ մեռանիմ
Զի զքեզ տեսի Վահագն՝ ազնիւ մտերիմ .
Լուր դիւցազուն , թէ քեզ Արբակ քաղցր իցէ ,
Գրթա՛ ի մայրն իմ եւ ի քոյրս Մերովէ ,
Որք անպաշտպանք ծածկեալ ի սուրբն են քարայր ,
Ե՛րթ առ նոսա , լեր դու որդեակ եւ եղբայր . » —
« Ո՛չ , ո՛չ Արբակ , դու ոչ պարտիս մեռանել ,
Ըզճեա իմնց գարշապարաց փութա՛ ել ,
Մի՛ դու անսաստ լինիր վերին սլատգամաց ,
Եկեալ եմ այսր ես յԱստուծոց ի դիմաց .
Խնդրեն ըզքեզ ծերք , մարք , դստերք եւ որդիք ,
Հապա կանդնեաց եւ կանգնեսցին հայրենիք : »
Եւ բուռն հարեալ ի շղթայից՝ զինչ բիւրեղ
Փըշրեաց բազկօքըն հաստաջիլ եւ ուժեղ .
Կենդանացաւ Արբակ , եւ յեց միմիեանց յուս ,
Խարխարելով շրջեալ ելին յազատ լոյս ,
« Քաղցր է , սասց Արբակ , շնչել ինձ զայս օդ .
Ո՛հ զի՛ անոյշ եւ զի՛ չըքնաղ առաւօտ .
Այլ տո՛ւր ըմպել ինձ , պապակիմ ծարաւի : »
Վըճիտ վտակ սրայծառ իբր ակըն ծաւի ,

էր ի հովտին ընդ խիտ ծառոց ըստուերաւ .
Փութացին անդր , էարբ Արբակ զօրացու .
Տեսեալ Արմագ ի հեռուստ , « Ողջ լեր , որդեակ ,
Գոչեաց ուրախ , իսկ ուր է մայր քո , Արբակ » —
« Էր թագուցեալ նա յԱնահտայ սուրբ քարայր ,
Երբ ինձ զողջոյն եւ ըզլերջին համբոյր տայր՝
Հեծեծելով հարեալ ի դառն արտասուս .
Հսպա սլասցուք յերիվարաց մեր ի նուս »
Լուսին , աստեղք թալկանային մերթ ընդ մերթ ,
Փչէր խայտայր զեփիւռ թեւօք վարդաթերթ .
Հունձք սիռէին լուսոյ ընդ լայն հորիզոն
Շառագունեալ ըզլերանց այտս անկանոն .
Մայրիք ըզվարս ըզգենուին սակեփունջ ,
Թռչունք յերկինս պարզէին քաղցր միմունջ ,
Եւ հեշտ էին Հայաստանեայց այդք դարնան .
Յանտառ մըտին քաջքն , եւ հատեալ բխր շրջան ,
Հասին առ մուտ կամարակոտլ անձալին ,
Ուր ոտն օտար շիշխէր կոխել բնաւին ,
Նըւիրական տեղի՝ զոհից հաշտարար ,
Եւ Անահտայ ուխտեալ կուսից սուրբ տաճար .
Աստ Հայկազանց սըրբին ըստուերք պարտապան
Եւ ի Մասեաց վըհէն յերկին սըլանան .
Աղօտափայլ կանթեղի լոյս ի խորոց
Յուլայր դողդոջ ի խաւարի թանձրահոծ ,
Շողայր , վեռայր ըզբարձրմովք սեւաթոյր ,

Եւ տրոփի ոտիցն ընդ կամարօք թինդ առնայր :
Անդ էր ի խորս՝ ընդ գըմբեթաւ երկնագոյն
Եւ ի վերայ պորփիւրակոփ սեղանոյն՝
Գեղեցկաճոյլ կանգեալ անդրին՝ մարմարեայ
Սաղաւարտեալ աղեղնաձիղ Անտէտայ .
Եւ ի կողիցն էին կախեալ զինչ դրասանդ՝
Ի թընամեաց կորզեալ սուսերք եւ վահանք :
Անոյ՛ զըշխոյ երբեմն աղբաց բիւր եւ բիւր ,
Ընդ Մերովեայ դասերն ողբայր զօրդին իւր .
Կալեալ զաջոյն գըգուէր ըզկոյսն ի համբոյր
Կըրկին սիրով , եւ ըզկարօաըն լընոյր .
Գըրկեալ ըզնա , կարծէր գրկել եւ զՍրբակ ,
Մին կորսւսեալ՝ միւսըն թըւէր զոյգ զաւակ ,
Բայց ոտնատրօփք բերեալ նմա տարակոյս ,
Ըսթափելով զառնայր ընդ փայթ յետըս կոյս : —
« Ո՛րք մարտիկ իցեն դօքա սպառազէն ,
Ո՛րք յանդըգուենք որ մըտան՝ ի աստ իշխեն .
Ո՛ հըզօր Դիք . . . զինչ ինձ թուի առ աչօք ,
Խաբիցի՞մ ես , Արբակ իցես դու արդե՞օք : »
« Ծանիր զՍրբակ , ասաց Արմոզ , ո՛վ զըշխոյ ,
Եւ ըզՎահագն աղատարար որդւոյ քոյ : »
« Ա՛հ որդեակ , — Ա՛հ մայր : » Գոչեցին միաբան ,
Եւ ընթացեալ զու լամբ միմիանց փարեցան .
« Մի՛ եւս ողբար , ասաց Արբակ , մի՛ հերիք ,
Ոչ գըլսովին , մայր իմ , թողին ըզմեզ Դիք .
Է՛ տակաւին յիս արութիւն եւ խրախոյս ,

է տակաւին Վահագն անյաղթ , եւ է յոյս .
Սա գըթացեալ եմուտ յիմ բանտ մահաղգեաց ,
Եւ ըզըզթացս իմ խորատկեալ զիս փրկեաց .
Մի համարիր պղծեալ նորա զայս սուրբ վայր ,
Անմեղ է նա , եւ ես գոչեմ ինձ եղբայր ,
Եւ քեզ որդեակ լիցի , գրկեա՛ զնա ի սէր .
Յայնժամ Անոյշ գոչեաց . « Եւ զո՞ր հեշտ նըէր
Քեզ Անահիտ տանել իցէ արժանի՛ »
Որ տեսանել շնորհեա զորդիս կենդանի ,
Եւ ի տաղնապս եւ յարհաւիրս տխրական
Խառնես այժմիկ ուրախութեան զայս վայրկեան .
Եւ քեզ հրեշտակ մեզ առաքեալ յԱստուածոց ,
Դիւցազունդ հայ , որոյ միտք հուր են եւ բոց ,
Յորոյ բազուկ խաղայ կայծակըն մահու ,
Զինչ մաղթեցից . Աստուածքն որովք շարժիս դու ,
Անմահ զարեւ քո եւ ըզլիառս պահեսցեն : »
Իսկ ժըմտելով Վահագն յեցեալ կայր ի զէն .
« Այգն , ասաց ծերըն , մերկանայ զառաւօտ ,
Գործ մեր բազում է՝ ժամանակն համառօտ .
Օ՛ն յութասցուք կոչել զիշխանս ի ժողով : »
Երիցս հընչեալ պըղինձն ահեղ խրոխտալով ,
Ի սըրսկապանըն մըտին քաջքն եւ Արմազ ,
Գուամարեցան անդէն , պընդեալ սուսերօք ,
Արի արանց վիշապաղունք մեծազօր ,
Պաստեալ յօնիւք , տըխրատեսիլ , զըլխակոր :

Զարմանք կալան՝ զարքայորդի տեսեալ քաջ ,
Եւ դասեցան լըռիկ յահեակ նոցա շ'աջ .
Յայնժամ Արբակ ել եւ յոտին կանդնեցաւ .
Յուսոցն ի վայր իջանէին գանդուրք սեաւ ,
Հասակ՝ քաջաց , ճակատ բարձր , աչք՝ կենդանի ,
Եւ ըզանջօքն արկեալ շքեղ ծիրանի : —
« Կիչապազունք իմ , զտրմանալ զտրմանայք
Ընդ վերադարձն իմ . թէ հըզօր են արքայք ,
Հըզօրագոյն են Դիք , Դիք մեզ են պաշտպան .
Հայք՝ գերութիւն մեզ սուր եւ մահ ըսպառնան ,
Այլ յերկնից հարք մեր խոստանան՝ հայրենիք ,
Ազատութիւն եւ փառք : Են մեզ թշնամիք ,
Թըշնամիք սէգ , այլ եւ են մեզ բարեկամք .
Եւ զի՛ ապա նստիմք անխոյթք եւ տարտամք .
Բար ինձ շըղթոյս ձուլեաց , վահագն փըշրեաց ,
Թէ կորուսաք ըզ յաղթութիւն սուսերաց ,
Ո՛չ զարութիւն բողկաց մերոց անվրկանդ ,
Ո՛չ , այլ վաղիւն յԱրարատայ դաշտի անդ ,
Թէ իցեն սիրտք ձեր օրպէս սիրտ Արբակայ՝
Կամ մեռանել եւ կամ յաղթել մեզ մնայ . . .
Այլ եղս՛կ ինձ , ո՛ւր է կայծակն իմ Հրահատ ,
Եւ ո՛ւր Փրաւօրտ՝ ընկեր տիոցս հարազատ ,
Ո՛ւր իցեն , զի՞ եղեւ նոցա մեռան , վահ . . .
Ըզ կործանեալն Աշդահակեան թափուր գահ
Հեղեղք արեանց կանգնել բաւեն ոչ նորոգ .
Հէք հայրենիք , ծընօր դիւցազն հազարօք ,

Այլ դիւցազունքն հազար ըզքեզ ոչ ծընան ,
եւ ոչ կարաց արտաբերել սյլ ինչ բան ,
Յարեաւ Արմոզ եւ շուրջ զիւրեւ հայեցաւ ,
Հոլովելով զաշկուռնս ընդ լայն յօնիւք թաւ .
Ի ճակատուն հերքն արձակին արծաթի ,
Հուր ի սրաէն , մեղր ի շըրթանցըն կաթի . —
« Ըշտացեալ սիրտ քոյին , Արբակ , խնդրէ վրէժ ,
եւ կուրացեալ դիմես ի վիհ գահազէժ .
Խոհեմութիւն , գեղեցկատուր մտաց սանձ ,
Յառաջադէմ ի փառս լիցի դիւցազանց .
եւ առ ոչինչ գրեմ ըզխառս խօկ եւ ըզյաղթ
Թէ առաջնորդ փառաց՝ յաղթից լիցի բաղդ .
Ընդդէմ քաջաց Հայոց դիմեալ յուսահատ ,
Բնաջինջ առնել կամիցիս զազգդ ընդ արմատ .
Չիցէ՞ քո զխորձ առեալ նետիցըն Հայոց .
Որ մահ սիրեալ անբուժելի բանան խոց :
Ինձ լուարուք , իշխանք , զի փորձ եմ եւ ձեր ,
եւ հեշտ խորհուրդք իմ թուեսցին յունկըն ձեր .
Փութայք ազէ հրեշտակ առ Հայս յղեցէք ,
Չայս ասացեալ , թէ հաշտութիւն կամիմք մեք ,
Եղբարք եմք ձեզ թէ մարդասէրք իցէք դուք ,
Թէ բըռնաւորք՝ մինչեւ ի մահ մարտիցուք .
Է եւ ի մեզ սուսեր եւ է արութիւն ,
Քաջ ընտրեցէք զհամբոյր սիրոյ կամ զարիւն ,
Դու Արբակ , երթ յայտնել Մարաց զանձըն քո ,

Եւ քաջալեր բեկեալ զօրաց քոց մտանս՝
Վիրաւորաց անկեկոց փոյթ տանք եւ հոգ ,
Տուր ըզքաջաց թաղել զմարմինսն փառօք ,
Եւ ես եկից անդ յաշտ առնել առ Աստուած
Յանդորրութիւն անմխիթար ըստուերաց .
Ե՛րթ ըզցրուեալքս ժողովեա՛ , կրթ հասար ,
Ձէն եւ վահան բաշխեալ ի մարտ յարդարեա՛ ,
Լըռեալ նըստաւ . եւ որպէս ամալք թանճրահոծ
Կախեալք յաղիս՝ մունչէ ծովն հողմակոծ ,
Այնպէս յուզեալ գոշեն իշխանքն ամենայն .
Ընդ ծերունւոյն խորհուրդ հաճին միաձայն ,
ԸզՏեւտէոս քաջարազուկն եւ ճարտար
Առաքելով առ Հայս դեսսկան հաշտարար :

Ձայն տարածեալ ի Մարտ թէ ողջ է Արրակ ,
Խուռն ամխիթիւ վաղեն՝ բարձեալ զազաղակ ,
Հնչեցուցեալ թմբուկս , շարժեն զէն եւ զաջ ,
Որոտագոչ ձայնեն , « Կեցցէ Արրակ քաջ » .
Արքայորդին ելեալ զօրաց իւր ի տես ,
Ամենեցուն յորդոր խրախոյս տայ պէսպէս .
« Կեամք ես , ապէ , Դից սլարդեւք են կեանք եւ մահ ,
Դիք փըլուպին , Դիք կանգնեսցեն ըզմեր դահ .
Թէ նորոգել է մարթ զահեղ սլատերազմ ,
Վառեալք ի զէն գումարեցայք զինեւ կազմ .
Ոչ փոյթ է մեզ թէ թըշնամոյն մեծ է թիւ ,
Ի եք կռուեսցուք անխոնջ բաղկաւ եւ սրտիւ :

Այլ նախ երթայք քաջք իմ սգալ անդամօր
Ուր հայրենեաց պաշտօնանք անկան վիրաւոր
Երթայք աղէ՛ գբաջս առիւծուց մարտակից ,
Երթայք , աւանդ , ըզտիրելիս ձեր եւ Դից ,
Իւրաքանչիւր ըզհայր , զեղբայր , զամուսին ,
Պատել ի հող զոր նիղակօք չափեցին ,
Եւ հեծելով ի կոկորդին գելաւ չունչ .
Ի դաշտ մահու գիմեաց ամբօխն անմուռնչ :

Ո՛վ տեսարան սգոյ , ցաւոց , արտասուաց ,
Ո՛վ դաշտ արեան յոր թաթաւին թեւք վառաց .
Անշարժ ահա դիզեալ կան ցուրտ զխակունք ,
Սօքա յերեկն էին առոյգ , զբարթունք ,
Զինազարդեալք գեղեցիկ , սիրտ ջերմ ի յոյս .


Այլ արդ աւանդ , ոչ տեսանեն ոչ ըզլոյս ,
Եւ ոչ զգան ըզճառագայթս արեւուն ,
Ոչ ըզհամբոյր սիրոյ շքրթանց դողդօջուն
Հարտանց իօրեանց , ոչ զեփիւռին որ ի զուր
Շարժէ զնոցին սաղաւարտօցն զխետուր .

Ո՛հ դեռահաս էին մահուն հարուածոց ,
Սեան հառաչանք ելէք յողոյս յանդընդոց
Եւ սլատեցէ՛ք դանգոթ Պարսկին ըզգլուխ
Իբր ըզպըտակ օճապտոյս թիւնաթուխ ,
Որ դաւ եղեալ վառեաց ըզհայս յանհաշտ մարտ
Եւ կոտորեաց ըզՄաքս անմեղ եւ անարօրտ
Ահաւասիկ անդ ծերունի ալեւոր ,

Ձեռք դողդոջուն՝ յեցեալ ի ցուպ , ակնկոր ,
Տեսեալ զորդիս վաղամեռիկ՝ հառաչէ ,
Դառնայ յերկինս արտասուալից եւ գոչէ .
« Ազատութեան վերայ մեռայք դուք որդիք ,
Արդ հաշտ լիցին հայրենիք , հաշտ լիցին Իիք ,
Աստ ի կարմիր յառազաստէն ելեալ կոյս
Գողտր եւ վախուկ իբրեւ գարնան արշալոյս ,
Զարթուցանել յորձէ՛ զեղբայր սիրասուն ,
Այլ ոչ արտօսըր թօթափէ զմահու քուն :
Անդ տարածեալ կայ թիկնաւէտ պատանի ,
Սուսեր յաջում , գլուխ ի վերայ վահանի .
Ո՛ր զդա մեռեալ ասասցէ . Մահ , ոչ զօրես
Ոչ զարութիւն ջրնջել դրօշմեալ յայդ երես .
Կամին թափել ի նըմանէ զսուր նորա ,
Այլ սառուցեալ մատունքն ունին պինդ ըզնա .
Թողէ՛ք թողէ՛ք նըմա զփառացըն զընկեր ,
Եւ թաղեցէ՛ք ըզսուր եղեալ առընթեր :
Իսկ պատանեակք երկու , եղբարք սիրունք աստ .
Զուլամբ միմիանց փարեալ , անկեալ կան տապատ .
Զերթ մի նետիւ որսացեալ զոյգ աղաւնեակ .
Մին ըզդիմօքն ածեալ զրահեայ է զիմակ ,
Եւ զաջն եղեալ ընդդէմ շըրթանց միւսոյն .
Իսկ զինչ շողայ յուսոյն վերայ օսկեգոյն ,
Մանեակ՝ սիրոյ նուէր , զի կոյս է չքնաղ .
Ճակատ նորա շուշանաթոյր այլ նուաղ ,
Զաչկունս սլատէ սեաւ ամսլ՝ մահու վարագոյր .

Այտքն են տժգոյն, շուրթն ամիտիեալ ի համբոյր,
 Սըփոեալ յըստեանցըն վերայ վարսքըն խարտեաչ,
 Ուն ըսպխտակ, մարմին հիւծեալ հալ է՝ ի մաչ,
 Կոյս սիրուհի, վառեալ ի դէն եւ ի սէր,
 Ոչ ի մահուն ըզսիրելին քո թողեր,
 Վասըն սիրոյ եւ հայրենեաց մեռար դու,
 Եւ արդ յաստեղս ըզնա սիրես յանդորրու :

Վահագն՝ Արմոգ ի վըրանի, լըռելեայն,
 Ինքեանք անտեսք, տեսանէին զամենայն .
 « Ո՛չ խըռովի սիրտ քո, որդեակ, ծերն ասաց,
 Ո՛չ շարժի գութ քո յողորմել թըշուառաց .
 Հըզօրք Հայոց ի յաղեղունըս վըստահ՝
 Սարեալք դիմեն ըզՄարս ջընջել չարամահ .
 Գունդ Արրակայ տկար, անգէն եւ անյոյս,
 Կայ պակուցեալ եւ չիք նըմա ուստեք խոյս .
 Զարիւն թափել եւ մեռանել արդ մընայ,
 Եւ ժուժացըս յայս կոտորումն անխընայ : » —
 « Տագնապ է ինձ մեծ, ս՛հ, Տէր ինքըն գիտէ,
 Եւ անօգուտ է ճիգն իմ յայսըմ հետէ .
 Այլ հի՛մ Վչտասսալ, արդարութեան թըշնամի,
 Իշխեաց նենգել կենաց իմոյս մըտերմի .
 Եւ ո՞րպիսի հնարիւք՝ Պարսիկն անիրաւ,
 Աղէ՛ պատմեա՛, Արմոգ, ժտեաց լարել դաւ : »



Die erste der beiden ...
 Die zweite ...
 Die dritte ...
 Die vierte ...
 Die fünfte ...

Die sechste ...
 Die siebente ...
 Die achte ...
 Die neunte ...
 Die zehnte ...
 Die elfte ...
 Die zwölfte ...
 Die dreizehnte ...
 Die vierzehnte ...
 Die fünfzehnte ...
 Die sechzehnte ...
 Die siebenzehnte ...
 Die achtzehnte ...
 Die neunzehnte ...
 Die zwanzigste ...

Յ Ա Շ Տ



Յողւոց հանեալ ծերն Արմոզ այսպէս խօսի .
« Կեանք Արքակայ խէթ է աչաց Կիւրոսի .
Կորուսանել խոկայ զթագազն ազգին Մար ,
Ժառանգ գահուն՝ զոր ինքն ունի բռնաբար ,
Ձեռն տուեալ Կիւրոսի հայր քո զինուք ,
Յորժամ խաղաց ի Մարս փառօք մեծաշուք ,
Եւ առնելով զաշխարհ նոցա աւերակ ,
Շամիրեաց ի սուր տէգ նիզակի զԱշդահակ ,
Ըզկին նորա զԱնոյ՛ մատաղ , անպաշտպան ,
Մանկամբք եւ բիւր ծառայիւք ած Հայաստան .
Ինձ ըզմանուին Արքակ ընդ քեզ յանձն արար ,
Եւ սընուցի ըզձեզ սիրով հաւասար .
Մանկութիւն ձեր զուարթ երազ սահեցաւ ,
Ոչ ըզճակատ ձեր երբէք ամս սլատեաց սեաւ .
Սիրոք ձեր կապեալք՝ իբր ի մի լուծ կորիւնք զոյգ ,
Աճեցարուք եղէք մարտիկ քաջաուոյգ .
Այլ եհաս ժամ , անջատեցայք արտասուօք ,
Զի սահմանաց մեր զապստամբս անողոք՝
Զհիւսիսայինս եղեւ քեզ յանձըն վանել ,
Եւ զի քէն լսկ դողայ Վշտասպն անընդել ,

Որ գաղտնապէս ի կիւրոսէ առ Տիգրան
Չար խորհրդով նենգի յըղեալ է դեսպան ,
Ժամ յաջողակ գտեալ , ճգնէր անընդհատ ,
Յունկն արքայի հեղոյր մեղմով խորհուրդ վատ .
Դարանակալ կոչէր զԱրբակ եւ ասէր ,
« Ոչ Հայաստան կացցէ յանդորր եւ ի սէր ,
Մինչդեռ վառի արիւն Մարաց կենդանի .
Զիսորդ Տիգրան ապստամբաց գութ տանի ,
Եւ ասէ հոյր քո զհետ երկար խորհրդոց ,
« Մահ Արբակայ մեծ հանդերձէ մօրըն խոց .
Ա՛ռ դու , Վչտասալ , ըզքաջընտիր զիմ հսկայս ,
Ե՛րթ , առ իս անձ զապերախտն ողջ ի շղթայս ,
Ե՛րթ , այլ չարիք ինչ անմեղաց մի հասցեն ք ,
Եւ զայս հրաման Վչտասալ ի գործ արկ անդէն :
Ընթացեալ յոտն անկայ լալով արքայի ,
« Խնայեա՛ , ներեա՛ սլաոտենեկին , ասէի ,
Տառապեալ մօրն ըստիմանք լոկ , վերջին յոյս .
Դու զնա մանուկ յանձն արարեր ծերունւոյս ,
Հնազանդ գիտեմ ըզնա , զի՞նչ մեղք են նորայ ,
Տէ՛ր , ըզզայրոյթ քո թօթախեա՛ յիմ վերայ : »
Անդըր շրջեալ ըզդէմս ասէր ինձ այսպէս .
« Ծանր է Արմոգ վիշտ քո զի զնա յոյժ սիրես ,
Այլ խաբիս դու . Արբակ է չար ապստամբ ,
Ե՛րթ , սլաոտմեսցէ քեզ ըզյանցանսըն Վչտասալ : »
Աճապարեալ ելի անտի յուռաբեկ ,
Եւ աղէտիցն արարի զքեզ իրազեկ :

Դիք գլխացին մեզ զի հասեր դու որդեակ ,
Ա՛ն ըզսուսերդ հնազա մարտիր ընդ Արրակ : »
Գոչեաց Վահագն որոտընդստ . « Զի՞նչ ասես ,
Զէ՛ն ամբառնալ դէմ հայրենեաց . մի այդպէս
Ան ոտն ըզխառս իմ հարկաներ եւ զանուն .
Զեռն անօրէն մխել յարիւն հայկազուն ,
Ա՛հ , ոչ ժուժամ , մի զայդ կրկներ ինձ , լուսնոց : » —
Եւ ծերունին « Ո՛չ , վասն օգտի հայրենեաց ,
Վասն անդորրու տիգրանապերճ աթոռոյն ,
Վասն պարտուց մըտերմութեան եւ պատուոյն ,
Խորհուրդ մեծ տամ քեզ , լուր ազէ , մարտիր դու
Վշտասպ Պարսիկն այն երկսպառակ , խռովարկու
Հալածեսցի անհետ Հայոց յաշխարհէ .
Զինեաց ընդդէմ Հայոց , վընասդ այդ փոքր է ,
Այլ մեծ՝ պայծառ ըզհետ նորին փառք շողան ,
Ընդ որս զարմանք կալցեն ըզՀայս եւ Տիգրան : »
Եւ աստ յանկարծ լուան ճիչ մեծ՝ յուսահատ ,
Թշուառ կնոջ որ կարդայր ողբ եւ գանգատ .
Ի մէջ երկուց որդեաց նստեալ արտասուէր ,
Զարիւն կողից նոցա սրբէր եւ ըզվէր .
Եւ մերթ զըգուէր , մերթ համբուրէր՝ դողդոջուն
Ըզձեռս եդեալ ի ցուրտ ճակատքս նոցուն ,
Իցէ՞ արդեօք սկրտ ըզգայուն , սէր հըզօր ,
Իցէ՞ արդեօք ցաւ դառնագոյն քան ըզմօր :
Ի վեր եկաց , փայլէին դէմքն իբր ըզհուր .

Զրահ ըզգեցաւ , եւ յազդերէ կախեաց սուր ,
Փեարազարդեալ ի գլուխ իւր ած սաղաւարտ ,
Կապարճ ի յուս , պատրաստեցաւ յանհաշտ մարտ ,
Եւ համբուրեալ զանշունչ մարմինսըն՝ դռչեաց .

« Որդեակք , ըզվրէժ ձեր խնդրեցից հայ յորդեաց ,
Ապա առ ձեզ յերանելեաց եկից դաշտ : »

Եւ ակնարկեալ հսարտ աչօք ի հայ վաշտ ,

Առ քաջազունս դարձաւ Մարաց բանակին :

« Ա՛ւաղ , ասէր Արմուղ , ս՛ւաղ թշուառ կին .

Ողբամ ըզձեզ դստերք Մարաց լուսերամ ,

Ըզգեղ , ըզսէր եւ զարութիւն ձեր ողբամ :

Մատնակուրծ լեալ զարմասցին ազդք խուժադուժ ,

Երբ զՎահագըն զիտասցեն ուխտադրուժ

Մըտերմութեան , որ հէք կանանց եւ ծերոց ,

Մերժէ օգնել , եւ խիստ կրէ սիրտ ի ծոց .

Ե՛րթ , Վահագն , երթ ընդդէմ Մարաց բարձ ըզսուր ,

Ե՛րթ , ի վերջէ զմեզ խնդրեսցես այլ ի զուր : »

Ասաց եւ ել ի վրրանէն ըշտասլաւ

Թողեալ ըզնա , ի սուրբ քարայրն ընթացաւ :

Կասուտագոյն լերանց բարձանց ի թիկանց

Արեւ ըզկառքս թաւալէր ոսկեսանձ ,

Եւ ի դաշտին անդ տակաւին քաջք Մարաց

Ըզդիակունս մեռելոց՝ լայն յասպարաց

Վերայ եղեալ , երթային մունջ՝ գլխակոր ,

Եւ զոյգ ընդ զոյգ իջանելով յանլոյս ձոր ,

Պատկառանօք ամիտօիէին ի սեաւ հող ,
Կերկերածայն հարկանելով մահու փող :

Գարնանային աստղակամար զով գիշեր
Տեղի տալով արշալուսոյ շաղարեր ,
Ի Բզնունի կապոյտ յալեաց օլաղպաջուն
Ոսկեվարսիւք ծագէր արեւ շողշողուն ,
Եւ ճօճալով վէտ վէտ ալիք վըրանաց ,
Մածանէր դաշտն իբրեւ ըզծով բոցազգեաց ,
Ընդ վըրանաւ լայնաբոլոր՝ բարձրածայր ,
Առոյդաբարձ վահագըն քաջ բազմեալ կայր
Յոսկեճամուկ՝ մետաքսառէչ ի գահոյս ,
Զինու վառեալ , ըզծիրանին արկեալ յուս ,
Յեց ունելով յաջ իւր ըզգլուխըն խորհուն ,
Զահեակն եդեալ յերախսակալ ոսկի սրոյն .
Զայն արձակեաց ի խոր սրտէ , ձայն հըզօր .
« Զարագուշակ գիշեր , երանգ ահաւոր
Զիս տակաւին յուզէ : Աստեղքն ամենայն
Դալկագունեալք , Որիոն աստղըն միայն
Արիւներանգ բոցով ցոլայր բորբոքէր .
Եւ ձայն հնչէր յուկն իմ , ձայն խոր եւ կերկեր ,
« Ե՛րթ մարտնչել վասն Մարաց » — Անդ ո՛ւթ Դիք . . .
Ո՛վ Հայաստան , ո՛վ իմ թշուառ հայրենիք .
Լաւ էր ինձ ոչ գիտել լարել զաղեղն իմ ,
Քան թէ կոչիլ հայրենամարտ մըտերիմ .
Ո՛հ եւ զիմօրդ ես կանգնեցայց ախոյեան

Բնդդէմ իմոց հարազատաց եւ արեան ,
Զայս կամին Դիք , եւ այս երկնից է պատգամ .
Հընազանդիմ եւ ես , աւաղ , այլ սոսկամ : »

Աստ ժամանակ անահտանուէր տաճարին ,
Բացան դըրունք դըղըրդանօք ահագին ,
Սուրբ սղնձին հընչեալ երիցըս գանգիւն՝
Ի մեծ հանդէս յաշտից , ի Դից դոհութիւն ,
Եկին իշխանք եւ զօրավարք , զոյգ ընդ զոյգ ,
Ի տաճարին ուր պատրաստեալ են գահոյք ,
Ի մէջ բոցոյ ջահից կարմիր կապուտակ՝
Կոյս Անահտայ ցոլայր անդրին ըսպիտակ ,
Ի ճակատուն արծաթամբն մահիկ ,
Յուսոցն ի վայր եւ ի ծըղեացըն փափկիկ ,
Բոլորէին դրասանդ ծաղկանց դունագոյն ,
Կոյսք պատէին զաջ եւ զահեակ սեղանոյն ,
Կոյսք գեղեցիկք , պատկառադէմք , երկրապիշ ,
Քող ըզգվսոք ածեալ ճերմակ՝ ասողանիշ ,
Եւ վարդածիր պատեալ պըսակ ի ճակատ .
Մերովէ՝ դուստր Աշգահակայ հարազատ
Շընորհալին Մերովէ , մեծ քըրմուհի ,
Ի գաղաթան կըրէր մահիկ արծաթի .
Զինազարդեալք ապա դային աղջըրկունք ,
Բզնետ նոցա երխասարդք և ռանգունք ,
Նիզակաւորք , ճօճեալ փետուրքն հողմավար .
Իսկ պատմուճան արկեալ զիրեւ ոսկեսար

Բազկատարած կայր ի միջի ծերն Արմոգ ,
Շուրջ սլար առեալ զօրավարօք եւ քրմօք .
Եւ ի վերջէ դասաւորեալ թիկնասլահք ,
Պողովատեայ էին նոցա սուր եւ դրահք :
Յառաջ անցեալ յայնժամ Արմոգ քրմասլեա ,
« Փառք Անահտայ, գօշէր, փառք Դից, փառք յաւէտ .
Ամենակալ Դիք , բարերարք , բարեխնամք ,
Չեն հպարտից այլ թըշուառաց բարեկամք ,
Որք ծիծապին ընդ գումարումըն բիւրօց ,
Զորոց՝ ոչ ուղմ եւ որոտումըն զինուց ,
Այլ անմեղաց եւ որբօց ճիշ ողբասաց
Զադամանդեայ շարժեն զաթոռս փառաց .
Հարք , մարք թըշուառք եւ օրիորդք սիրական ,
Չեր հեծեծանք մինչեւ յերկին բարձրացան .
Այո՛ , տեսին ըզսիրտըս ձեր կարեվէր
Եւ հաճեցան ընդ ջերմ աղօթս եւ զոհ՝ ձեր ,
Ի հաշտութիւն զիջեալ են Հայք , հաշտութիւն ,
Ոչ եւրս մարտ , ոչ եւրս մահ եւ արիւն .
ՅԱրմաւիր դարձ առնէ բանակըն վաղիւ .
Տացին ձեզ փառք ձեր առաջին եւ պատիւ .
Անփոփոխ զազգ ձեր սահեսջիք եւ լեզու .
Մըշակելով վայելեսջիք յանդորբու
Հայաստանեայց զերկիր բարի եւ առատ ,
Եւ թէ սիրէք ըզՀայս , կեցջիք միշտ ազատ , »
Յայնժամ բարբառ ահագնալուր արձակեն
Զըւարթացեալք հըսկայք Մարաց , եւ ըզղէն

Բարձեալ եւ դրօշ , ալեծածան շարժին գունդք ,
Տոփեն թմբուկք , թնդան հովիտք եւ անդունդք ,
Եւ սլար կազմեալ , իներդաշնակ ձայն յարմար ,
Հնչեցուցեալ զուարթ բամբիւն յոսկի լար ,
Անահտաձօն երգեն կուսանք գեղեցիկ ,
Վեր վայր խաղան նորաբոյս լանջք ուռուցիկ .

Մայր գեղեցիկ Անահիտ ,
Փունջ փունջ վարդիւք թարմ եւ կարմիր ,
Բարդ բարդ ծաղկօք աղէ՛ դարձիր
Ի դաշտըս մեր եւ հովիտ :

Ակն աստեղաց , դուստր ազատ ,
Որ ըզլուսնի զգենուս բեհեզ ,
Ընդ հովանեաւ սլայծառ՝ ըզմեզ
Մածկեա՛ քողոյդ անարատ :

Դու տուր հարսանց սէր քաղցրիկ ,
Դու լեր զինուց Մարաց սլաշտսլան ,
Աւետարեր խաղաղութեան ,
Անահիտ մայր գեղեցիկ :

Որպէս վըտակ ի լըռութեան գիշերի
Քաղցրամբմունջ ի մէջ ծաղկանց թաւալի ,
Եւ անդ նստեալ հրճուի սանդուխտն ի հաճոյս
Եւ խայտայ սիրտն ի բերկրութիւն եւ ի յոյս

Կամ սիրելեաց հեռաւորաց ի խնդիր .
Այսպէս Վահագն յանոյշ պատեալ ի Թմրիր
Եւ մոռացեալ ըզցաւ սրտին եւ մորմոք ,
Յասիշտակեալ եւ զմայլեալ էր մտօք .
Ճեմէր հողին ի բուրաստան հեշտաւայր ,
Յանձանօթ ծով սիրոյ լողայր եւ ծփայր .
Թըւէր նմա զբոյլ զուարթնոց տեսանել
Եւ զանմահից լըսել քընար ոսկեթել :
Յողայր ցայտէր ի սեաւ աչացն հուր եւ բոց ,
Սէր ի սրտին բանայր նեախն անբոյժ խոց :

Մատչէր Արմոզ ի զոհարար սուրբ սեղան ,
Բերէին զեղն , հուր ցանէր շուրջ սրբազան ,
Եւ տարածեալ ըզձեռս լըռիկ կայր յաղօթ ,
Բարձրանային յօդս ամպք խնկոց քաղցրահոտ ,
Եւ ողջակէզն այրէր , ծուխ թանձր ելանէր .
Դառնայր Արմոզ , եւ զաչս ի զոհն արկանէր ,
Յուզէր , խռովէր , փորէին խորչք ճակատուն ,
Շրջելով գոյն դիմացն , ի ձայն զողղոջուն ,
« Ոչ հաճին Դիք , գոչէր , ընդ զսհ հաշտութեան ,
Աղէտք ահա եւ վտանգք նոր սպառնան .
Օն Մերովէ , կոց յանդիման Անահտայ ,
Զինչ հրամայէ , իմա՛ եւ մեզ յայտ արա՛ւ »
Փութացեալ դայր կոյսն առաջի սեղանոյն ,
Իջեալ պատէր ըղնովաւ ամպ լուսագոյն .
Եւ երեւէր ասլա դիմօք բոցավառ

Ի լուսերանդ ծածկեալ շրջարշ եւ սլայծառ .
Եւ բոց զոհին , նշոյլք ջահից ծիրանի
Բզ ճակատուն ածէին չէկ հովանի .
Եւ խոսուպիք ծածանէին հերացն օղ ,
Բնդ ըստուերաւ յօնիցըն սեաւ՝ ցոլ եւ փող
Արձակէին աչկունքըն մաւթ եւ մեղոյշ .
Ի Դից շնչեալ վեհ հայեցուածք , դէմք անոյշ ,
Վարդակարմիր շրթունք , մարմին լուռազգեաց ,
Յերկնաբընսկ թըւէր յանմահ հրեշտակաց ,
Ի մէջ ամպոց որոտաց , զաջն արկեալ շեշտ .
« Ի մարտ , ի դէն , այս են Դից կամք անհրաժեշտ ,
Յուզեցան սիրաք քաջաց ի մեծ տրտմութիւն .
Զաչս ամբարձեալ տեսին փոշեաց աղօտ սիւն ,
Եւ դիմեալ զայր արշաւատոյր ձիաւոր ,
Տարազ սպարսիկ ըզգեցեալ , դէմքն ահաւոր .
Հասեալ սանձեաց ըզբոցաշունչն երկվար
Եւ զաջն ի Մարս ձգեալ՝ գոշեաց խրոխտաբար .
« Զիս սրամեալն յըզէ Վշտասսս քաջախոհ
Առ ձեզ , ոյլ Մարք , ազգ ապերախտ եւ տժգոհ .
Տիրամատնիչն Արբակ , առ Հայս ապտամբ ,
Որ նըշաւակ զինուք , գերի իրաւամբ՝
Փախըստական առ ձեզ դարձաւ , աղէ՛ տուք
Բզդա ի ձեռս իմ եւ ազատ լիջիք դուք .
Ներողամխտ է Վշտասսս , հեզ եւ ըզգաստ
Լերուք եւ դուք , զԱրբակ աղէ՛ ածէք աստ ,
Ապա թէ ոչ նորոգեսցի մարան ահեզ ,

Նորողեսցին եւ դետք արեան բազմահեղ .
Մի 'Դիս լինիք եւ մի' բազուկ ձեր վստահ ,
Կազմ են սուսերք մեր , ընտրեցէք կեանս կամ մահ : »
« Արիւնարբու սյ դու գազան պիղծ՝ զազիր ,
Իժ թունալից եւ նենդ ժոտ , նախ դու կորի՞ր ,
Վիժած վըհից , Տարտարոսի արբանեակ ,
Առ ըզբո վարձ » . գոչեալ եւ շեշտ ըզնիզակ
Հսկայածեւ՝ ի վեր վազեաց զայրազին
Վահագն անժոյժ՝ դրոշմել ի կուրծս անդ Պարսիկն .
Այլ զԱրմոգայ լուեալ ըզձայն բարկութեան
Որ յուշ ածէր նըմա դոեզին սրբազան ,
Պատկառեցաւ եւ զնիզակն տմիտիեաց . —
« Ոչ ժանտ արեամբ քո պղծեմ զայս վայր , ի բաց ,
Առ նենդաւորն , երթ առ Վշտասպ բարբարու .
Զարիւն կամի , արիւն Հեզցի յորդահոս .
Ի մարտ զն , է եւ ի մեզ նետ եւ սուսեր : »
Վառեցան զօրքն , եւ ամբարձեալ զէնս ի վեր ,
« Ի մարտ , ի վրէժ , » միաբերան գոչեցին .
Եւ շոյտ մըտրակ կոխեալ ի կուշտ նըժուզին՝
Լեղապատառ փախեաւ Պարսիկն Հսոց կոյս :
Ի վեր եկաց յայնժամ Արմոգ տալ խորխոյս . —
« Ի մարտ , ի վրէժ , պատգամն հընչէ մահազոյժ ,
Ի մարտ գոչեն սլատանեակք քաջք եւ աշխոյժ .
Իսկ դուք , փախուկ տիկնայք , դուք զինչ , տեսանեմ
Ըզձեզ դարձեալ յուսահըտուր , տխրադէմ ,
Վասըն որդւոց եւ սիրելեաց դողայք դուք .

Եղնկ է ձեզ, ոչ պաղատանք՝ արտասուք,
Ոչ գետք արեանց բաւեն Պարսկին անընդե,
Յանդութ ձեռացն ըզսուր ըզմահ կողոստել
Արիւն ի գլուխ նորա. ի կռիւ Օն, ի կռիւ.
Թէ ոչ քաղկաւ դէթ ախոյեանք դուք սրտիւ,
Տուք սիրելեաց ձերոց որդւոց քաջալեր,
Սուր ըզմիջովքըն կապեցէք անվեհեր,
Ջերմ համբուրիւ յորդորեցէք մրցիլ քաջ,
Արիաբար դիմել մահուն ընդ առաջ,
Եւ դուք մարտիկ, սկայք հզօր եւ ընտիր,
Առաջի Դից ամենակալ՝ վրէժխընդիր,
Մինչեւ ի մահ կռուիլ բազկաւ եւ զինուք,
Վասն հայրենեաց դնել ըզկեանս երդնուցո՞ւք : »
« Երդուեա՛լ, » ամբօսըն մանչեաց միաբան,
Ովկիանու խռովեալ ալեացըն նըման :
Հաճեալ Արմոգ. « Հասպա, կրկնէ, քաջազունք,
Վահագն, Արբակ, արքայորդիք միասունք,
Երդնո՞ւք ի սուրբ սեղանս, ի սուրբս այս ի հուր,
Իւրաքանչիւր վասն ընկերին ածել սուր : »
« Երդնումք այ՛ո, ի սուրբս այս հուր, ասացին,
Եւ թէ հասցէ մահ, մեռանել միասին : »
Եւ մերկացեալ իւրաքանչիւր զահէղ սուր
Կարկառեցին ձգելով շէշտ առ սուրբ հուր :
Եւ ասլ՝ Արմոգ. « Դարձէ՛ք աղէ՛, լերուք կազմ,
Վաղայարոյցք այդուն այդուն յանհաշտ խազմ.
Ազատ քաջաց՝ երկինք են քաղցր հայրենիք,

Յերեկոյի յաստեղունս անդր հանգիջիք :
Ամպրոպայինն ահա Որմիզդ ալեւոր ,
Ակմբահոյլ ըզնովաւ Դիք պարաւոր ,
Ի գլուխ վատաց թափի, շանթիս մահաշունչ ,
Ի գլուխ քաջաց սլքսակս անմահ վարդափունջ : »
Լըռեաց . հարան փողք , մտին կոյսք ի տաճար ,
Զօրք ի վրբանս հանդերձել սուր եւ ասպար :



Վ Ի Շ Տ Ք



Միռեալ գիշեր ըզքող տամուկ եւ սեաւ շուրջ
Ի մութ պատէր զերես երկնից պարզ եւ լուրջ .
Եւ ոսկեհեր աստեղունք՝ ցոլ եւ ժպիտ
Ծաւալէին ի դաշտ , ի ձոր եւ հովիտ .

Ահիք լուսաթոյր զերթ ուրուականք թափանցիկ
Թափառական գնային յօդոս լընիկ ,
Եւ սօսաւունք նսեմաստուեր անտառին
Իբր հեծեծանք էին տխուր գիշերին :
Ի մէջ դաշտաց կանգնէր ըզգլուխն իւր ի վեր
Ծերըն Մասիս հսկայակերպ , ալեհեր ,
Ուր հոլաթեւ Հրեշտակ փառաց եւ Հայոց ,
Արծարծելով զազատութեան ի Հայս բոց ,
Եւ ի Հայկայ մինչեւ Արամ եւ Տիգրան ,
Պաշտպան զինուց եւ առաջնորդ յաղթութեան ,
Յարուօսը հարեալ արդ ըզՀայոց լայր զաթոս
Զի անիրաւ տայր ընդ անմեղքս մարտ գոռ :
Իսկ առ Մասեաց ըստորոտ Մահ անհամբեր
Նստեալ հսկէր եւ ըզմանգաղ իւր սըրէր ,
Պճնեալ նետիւք եւ սուսերօք գլուխըն կունդ .

Բաց առ ոտիւքն էր ոսկերօք լի անդունդ ,
Ուր արձագանդք իսկ հառաչել չիչխէին ,
Յոր ակնարկեալ՝ գունաթօսի խոյս տայր լուսին :

Վիշապազունք անկեալ կային ի խոր քուն ,
Գիշերապահքն նըստէին շուրջ հըսկուն ,
Եւ երիվարք բոցաւընդունք փունչէին ,
Դոփեալ ոտիւք եւ դափրելով ըզգետին .
Ուրեք ուրեք ցոլային փայլք կանթեղաց .
Մարք եւ հարսունք ի վրանս եկեալ սիրելեաց
Վերջին նուազ տային համբոյր եւ զողջոյն .
Եւ սրատունին դիրկս ածելով սիրուհւոյն ,
Գանգրամբ հերացըն խաղայր , զայտսըն գգուէր ,
Եւ սիփիէր ըզնա՝ յաւէրժ ուխտեալ սէր .
Առեալ ապա սիրամբումնջ ըզբընար ,
Նրգէր տուեալ ըզմատն ի թել ցօղաշար

Ո՛վ իմ հրեչտակ , ընդէ՞ր կոծիս ,
Մինչեւ կեամ ես , ո՛հ դու մի լա՞ ,
Թէ սիրեմ ոչ ըզՀայրենիս
Զքեզ սիրել իցէ՞ հնար .

Օ՛ն յազգերէ զսուրն իմ կախեաց ,
Եւ մի հեծեր մի աղեկէզ ,
Զի քաղցր է ինձ սիրել ըզքեզ
Կամ մեռանել վասն Հայրենեաց :

Գիտեմ սիրել եւ մեռանել ,
Թէ խնայեսցէ բաղդն յիմ հասակ ,
Ըզյաղթական եւ զոսկեթել
Եդից ի գլուխ քո զիմ պըսակ .
Թէ վերս առից , ո՛հ ոչ ժուժամ ,
Մի սիրելիդ իմ , արտասուօք
Մեղմեալ զեռանդն իմ եւ բորբօք ,
Դառնացուցես ըզմահուս ժամ :

Բայց ըզմարմինս իմ դալիահար ,
Առեալ պատեա՛ ի ցուրտ դամբան ,
Եւ առկախեա՛ անդ զայս քընար
Եւ զայս սուռերն իմ յաղթական ,
Զի գիտացեն մանուկ եւ ծեր
Թէ եմ սիրող ես եւ արի .
Եւ երբ գիշեր զերկրաւ փարի ,
Ե՛կ արտասուեա՛ զիս , քաղցր իմ սէր :

Ունկըն կախէր վահագն յիւրմէ խորանէն ,
Որ տազնապեալ ոգւով արթուն կայր եւ մէն .
Սեաւ տխրութիւն պատէր նորին ըզճակատ ,
Մերթ ի յերկինս ամբառնայր զաչս յուսահատ ,
Մերթ սրտմտեալ որպէս առիւծ յորջոյն խոր ,
Գոռայր , մրռայր , այլ ի գոչիւնս չահաւոր՝
Երբէք երբէք խառնէր մրմունջ մեղմաճացն .
Սէր թաքուցեալ յալիս խռովեալ սրտին այն

Հառաչելով մնչէր իբրեւ ակիոնս :
Ի ձեռս ասլա առեալ դռհար՝ սիրոյ ձօն ,
« Գոհարդ աղնիւ , ասէր , անգին դու նուէր
Անմեղ կուսին որոյ ի սիրտ խաղացեր ,
Եւ ըզգացեր ըզբարախամունըս նորա ,
Ինձ ըզգաղտնիս սիրոյն աղէ՛ յայտ արա՛ :
Յորժամ ըզքեղ համբուրելով ի ժըմիտ ,
Կամ յարտասուաց տողորելով մարդարիտ ,
Յիս ակնարկէր , հիմ վառէին այտքն ի բոց ,
Եւ ցաւագին աչկունքն ինձ բիւր տային խոց :
Վարդք յորըս նա ճեմէր՝ էին դեղնագոյն ,
Զերթ աղօտ լոյս որ տեղի տայ արփեննւոյն .
Եւ արհաւիրք մութ անտառի եւ խոնաւ
Ո՛հ բուրաստանք երեւէին ինձ նովաւ : »
Զհանդուրժեալ ցաւոյն՝ եթող ըզվըրան
Եւ ի մեղմեւ ըզվիշտ սրտին անդարման ,
Ի մէջ թըփոց ծաղկածաւալ քաղցրաբոյր ,
Մերթ թոյլ եւ մերթ երազ ոտիւք ճեմ առնոյր :
Մերձ էր անտառն ուր հողմ հեծէր հեզաչունչ ,
Եւ ուր վտակ կարկաճէր քաղցր ի մրմունջ :
Սիրէր Վահագըն դանտառաց շառաչիւն
Սիրէր զըստուերս՝ աղատասուն զերթ կորիւն :
Եւ մինչ գնայր ի մէջ մայրեաց թանճրախիտ
Կոյս տեսանէ , չըքնաղ իբրեւ զԱնահիտ ,
Որ անդ նստեալ ի լռութեան գիշերի ,
Զեւք ի ծնօտ , մտօք այլուր դեգերի ,

Պիշ սիւշ յառեալ խոր խորհրդոց հետամուտ .
նշոյլք լուսնի անցեալ ընդ ոստըս թաւուտ ,
Փափուկ մարմնոյն խայտաճամուկ հիւսեն քօղ ,
Եւ վարսք վէտ վէտ խառնին ընդ շող եւ ընդ ցօղ .
Այլ խըռովի յանկարծ լուեալ ոտնատրոյի
Եւ ժողովեալ ըզվերարկուն իւր ամիտփ ,
Սիրտ ի տազնապ , կաթէ յայտէն վարդ ամօթ .
Յառաջ անցեալ Վահագն , « Ո՛վ կոյս անծանօթ ,
Մի՞ դու իցես , ասէ , չըքնաղն Անահիտ ,
Մայր անտառաց եւ բիւր առուացըս վըճիտ ,
Թէ Անմահին իցե՞ս հրեշտակ գինակիր ,
Խօսեաց աղէ՛ , եւ ես սլաղից քեզ երկիր ,
Զի վեհ թըւիս ինձ քան զամէն մահացու : » —
« Չեմ ես ի Դից որպէս կարծեսդ , ո՛վ քաջ դու ,
Ի վիշտ ծնեալ աւանդ , թշուառ կոյս եմ ես : »
Ասէ եւ խոյս տայ շոյտ թեթեւ եղան սէս .
Վարանելով քաջին աչկունք բորբոքին ,
Ըզէտ կուսին պնդի՛ յուզեալ ի հոգին .
Որպէս արծուի ամպախապաց սըրանայ ,
Երկիր թնդայ՝ նդ ոտիւք որդւոյն Տիգրանայ .
Խըրամատեալ աղջիկն ըզթուփ եւ զմացառ ,
Սուրայ , վազէ անդուլ , հեւայ շնչասպառ .
Եւ ահա ժայռք աստի անտի ահաւոր ,
Եւ առաջի նորա բացեալ է վիհ խոր .
Անդ տեսանէ ընկողմանեալ սեաւ վիշապ ,
Եւ յետս ոստնու պաշարեալ յահ եւ տազնապ .

Հրէշըն զարթնու , ճըկի , չըչէ , շնչէ թոյն ,
Եւ ի ճօճալ երկուց աչացն յարեան գոյն
Պակասէ սիրտկուսին՝ հարեալ զդողանի ,
Մունգք իւր կըքին , նուաղ յերկիր անկանի :
Այլ զաջն ի կող արկեալ Վահագն անվեհեր ,
Դիմէ բարձեալ ըզլանթափայլըն սուսեր ,
Հարկանէ շեշտ յերկուս հերձեալ ըզկարամբ ,
Եւ թաւալի հրէշն յանդնդոց անդր ի թափ :

Կայ տարածեալ կուսանն անշունչ եւ անշարժ ,
Եւ Հայկազունն իբրեւ մանուկ դեռավարժ
Տարակուսեալ եւ սլակուցեալ յայն տեսիլ ,
Մփայ ի գութ՝ յամօթ , շիշխէ խի հպիլ :
Անդ էր վրտակ սլայծառ ակեօք բարդ ի բարդ :
Վազէ Վահագն՝ ըզսաղաւորտն օսկեզարդ
Մղեալ ընու ի կատուտակ ջրոյն զով
Եւ անկելոյն դարման տանել գայ փութով :
Ի վերայ ցուրտ մարմնոյն անկեալ կաթիլ սլաղ՝
Դողայ աղջիկն եւ արձակէ ձայն նուաղ .
Եւ ծագելով յամօլոց ի դէմնըն ճաճանչ ,
Ի յայտ բերէ չքնող սլատկեր հիասքանչ .
Սանդաղատեալ քաջին՝ մատամբ դողդաջուն ,
Ջնջեալ սրբէ զքրատունս տժգոյն ճակատուն :
Այլ տակաւին սլատեն ըզմիտըս կուսին
Ահ արհաւիրք երազայոյզ , ցնորք սին ,
Եւ անորոշ բանս անխմատ բարբառէ :

« Ահա վիշապ ահնդ ելեալ յանտառէ
Սողայ՝ զագին բախեալ, բացեալ ըզժանիս,
Բոց եւ արիւն շնչեալ դիմեալ գայ առ իս,
Հի՞մ կաշկանդեալ են ոտք իմ. . . մի՞ զիս թողուք,
Հասէ՞ք փրկել զիս, հասէ՞ք քաջք վրիժառուք,
Եւ ցրուէ քաջն ըզմանկուհւոյն ըզցնորս։

« Անկաւ, դոչէ, անկաւ վիշապն անդր ի խորս,
Եւ արդ երկիւզ սլաաիր ըզքեզ խըսովէ։
Ջարթիր ի յոյս, զարթիր ո՞վ կոյս Մերովէ, » —

« Ո՞վ իցես դու. . . մի՞ դու Արբակ եղբայր իմ. » —

« Ձեմ ես Արբակ, այլ Արբակայ մլտերիմ,
Վահագն եմ ես, մատուցանեմ քեզ խնամ։
Եւ դու աւանդ, ո՞չ ճանաչես զիս անգամ, »
Կոյսն ըսթափեալ կարմրելով վեր կանգնի,
Երախտասպարտ փարի զոտիւք Վահագնի, —

« Ի դիւցազունս հաղար, դիւցազն ես ազնիւ,
Եւ այնչափ վեհ զիշխեմ հայիլ իսկ հաղիւ։
Երթայց առ Դիս առուրս մազթեւէքեզ բազում, » —

Եւ յո՞ երթամ, ասա՞, ընդէ՞ր սիրտ արտում,
Ընդէ՞ր սրտեն ամսք ըզճակատ քո սլայծառ։
Ահ, Մերովէ, եւ զի՞նչ վըշտաց քոց սլատճառ, » —

Դառն են ինձ կեանք, հայրենազուրկ, որք, ըստրուկ,
Ատեամ զաշխարհ, ատեայ աշխարհ զիս, եզուկի. » —

« Այլ սիրէ քեզ Վահագն, ի սէր ճենճերի,
Ոչ ըստրուկ դաւ, աշխարհ սիրոյգ է գերի։
Մի՞ վիշտք՝ այլ թագ զվսոյդ կարմիր վարդենիք,

Եւ Վահագնի սիրտ քեզ լիցի հայրենիք .
Կորուսանել թէ հասանէ զփառս եւ դահ՝
Երդնում ո՞վ կոյս սիրել ըզքեզ մինչ ի մահ .
Յաւէրժ սիրել զքեզ ուխտեմ , ո՞վ հրեշտակ .
Այլ հիմ ըզսէրն իմ համարիս դժնդակ ,
Ո՛հ իմանամ , յԱշդահակայ , Մերովէ ,
Իջանես դու , ես Տիգրանայ յարենէ : »
Եւ փոթելով կոյսն ըզյօնից սեաւ կամար ,
« Սիրիցես զիս , գոչէ , աւաղ , սէր յիմար .
Զիմորդ սիրել վատարաստիկ ըզկուսան
Որ նուիրեալ է յԱնահտայ սուրբ սեղան .
Սահելով կեանք իմ յանձանօթս անարատ ,
Ոչ պատեսցէ թագ հարսանեաց զիմ ճակատ .
Ընդէ՞ր Վահագն ըզհետ փառաց ոչ դիմես ,
Զաննըկուն սիրտ քո թուլացո՞յց սէր այդպէս : » —
« Դու անողորմ այժմիկ առնես զիս դսրով .
Այլ զինչ ինձ փառս թէ պըսակին ոչ սիրով .
Ի զուր փորձես , հաստատ է սէր յիմ հոգւոջ ,
Բորբոքես եւս՝ չիջուցանել կարես ոչ .
Ո՛չ իսկ ցոլայ սէր եւ յաշաց քոյին մութ ,
Մի խափանել զայն ճգնիցիս , ո՞վ անգութ .
Յիչէ՞ս զօրն երբ ի պարտիզի յԱրմաւիր ,
Ընդ հովանեաւ սօսեաց՝ մենիկ նըստէիր ,
Յարտօսր հարեալ , պատեալ ի վիշտ կարեվէր .
Հարցի զվասն կրն եւ չիկնելով ասացեր ,
Թէ զդառն աւուրս ցաւոց լայիր եւ զաքսոր .

Հիմ խոնարհես զաշկուենս , հիմ կաս գլխակոր .
Տես զայս դոհար , ճանաչիցես , դու , այո՛ ,
Ետուր ինձ զայս ի յիշատակ սիրոյ քո ,
Զոր համբուրեալ ողողէիր յարտասուս :
Եւ անողոք արդ զիս մերժես եւ թողուս .
Աղէ՛ , խօսեանց , տարակուսեալ զի՞ խորհիս .
Մերովէ , սէր քո տակաւին իցէ՞ յիս : »
Յաղթահարեալ օրիորդին գեղեցիկ ,
Յերկին բարձեալ զաչս արտասուօք թափանցիկ ,
Թողեալ ըղձեռն ի մէջ ձեռաց Վահագնի ,
« Աւանդ , գոչէ , սիրտս ի կըրից տատանի ,
Ընդէ՛ր զիս ո՛վ Անմահք , թողէք անսպաշտպան .
Ո՛ւր Մերովէսայ ո՛ւր արութիւն կուսական .
Վեհ զգացմունք եւ սուրբ եռանդն ո՛ւր իցէք
Անէ՛ծք ի գլուխ քո Մերովէ՛ աղջիկ հէք
Այլ ոչ այդպէս , անյողգողդ է ուխտ հոգւոյս ,
Իջէ՛ք ո՛վ Դիք եւ պահեցէ՛ք զիս միշտ կոյս : »
« Զայն քո զիա՛րդ , ասէ Հայկազն , հեշտալուր
Յուենին իմ հնչէ Մերովէ . այլ սիրտ ամուր ,
Սաստես սիրոյ եւ զխոստմունս դրժես դու .
Ըզբան վերջին տաս՛ կենաց կամ մահու ,
Թէ ատեսս զիս , երթամ ի վիհ անդ Մասեաց
Թաղել ըզսէրն իմ յըստուերաց խոր խօսեանց ,
Երդուիր յարեւ քո , սիրես զի՞ս , սիրես զի՞ս : » —
« Ուխտեալ է սիրտս ի քեզ , եւ դու վարանիս
Սիրեմ , աւանդ հիմ կեղեքես զիս սյոջափ : »

Եւ զգէմն ծածկեալ ձեռօք, անկաւ ուժաթափ :
Խոնարհելով՝ ի ճակատուն լուսաթոյր,
Գողացաւ քաջն հրեղէն շրթամբ՝ ջերմ համբոյր :
Ծաղեաց արեւ, փորոտաց փող մարտագոջ,
Կոյսըն սարսեալ ձրգեաց ըզձեռքս դողդոջ :
« Ի մնրտ, գոչեաց Վահագն, ահա բանակ մեր,
Ահա շարժիւ արդ սիրելիդ իմ, ողջ լնր : »
« Ե՛րթ. » կոյսն ասաց ձայնիւ տրտում եւ տկար,
Եւ ըզկրնի նորա կացեալ ընդ երկար՝
Չափեաց ուշիւ զհասակն աչօք սիրազգեաց,
Մինչեւ կորոյսն, սալա նստեալ արտասուեաց :

« Որդեակ իմ, բուռն հարեալ զաջոյն Արբակայ,
Ասէր Անոյշ ի քարայրին Անահտայ,
Հեշտ քեզ, որդեակ, վերջին բանք իմ լիցին, լնր.
Ըզհօր քո քաջ գիտես զանգութ մահ տըխուր.
Սէաւ յիշատակ, սըրտակըտուր տեսարան,
Որ կեղեքէ դարձեալ ըզվերս անդարման
Թիկնադարձոյց Մարք գընային փախստեայք,
Ըզհետ նոցա ընթանային յազթող Հայք.
Հերարձակ՝ ճիչ բարձեալ, տայի ես խրախոյս
Ցրուեալ զօրաց, այլ եզնկ ոչ եւս էր յոյս :
Անդ զԱշդահակ տեսի կողիւք սատառեալ,
Դալկադէմ, աչք նըւաղ, յարեան իւր թաւալ.
Դեռ ծըխալով տէգն ի ձեռին՝ Տիգրան վէս
Դիտէր հանդարտ այլ աւաղ, զինչ ասեմ ես

Վէտ՝ Աշդահակն էր , ինքն անձին նիւթեաց մահ .
Եւ զինչ առնել ինձ . . . մեռանել անդէն , ան
Փորձ փորձեցի . այլ արդելոյր զիս Տիգրան ,
Քաջահասակ եւ երեսօքըն գունեան ,
Մեղուակն , անձնեայն եւ ճոխ մօրուօք կարմրաչէկ ,
Օղ օղ խարտեալ ծայրիւ հերաց աղէրեկ ,
Թուլացոյց զաջս իմ , եւ տըկարս յաղթեցայ .
Շարժեաց աւանդ , ըզսիրտըս գուրթ խաբերայ .
Կեանց , սով կին դու , ասէր յաղթողըն Մարաց ,
Թէ ոչ առ սէր , կեանց առ վիշտ քո , այն կեանց
Վասն որդւոց քոց , յուչ քեզ առնեմ զի մայր ես ,
Անգուրթ Տիգրան եւ արդ զորդւոյս մահ խնդրես .
Ոչ յիշես արդ զի մայր եմ , ան , մայր դժբաղդ . . .
Հասկա որդեակ իմ , երթ ի մարտ , երթ ի յաղթ ,
Մերկեան զսուսեր , զեռանդն եւ բոց ըզդեցիր . . .
Անարգանաց հիքիս դու լեր վրէժխնդիր .
Այլ սչ . . . տեղի տուր . . . կուրացոյց զիս զայլոյթ .
Ոչ խնդրէ զմահ մեր , Տիգրան ոչ է անգուրթ .
Քաջ իսկ գիտեմ , սիրտ ունի վեհ եւ ազնիւ .
Այլ Պարսիկն այն զոր եւ յիշեմ ցարդ ահիւ ,
Ոստայն հինու զվատ չարութիւնն ի ներքոյ .
Ի գլուխ նորա լուծցես ըզվրէժ դու հօր քոյ .
Թէ փառք՝ գահոյք , կործանեցան ի հիմանց՝
Ո՞ղջ են բաղուկք մեր , ո՞ղջ է վրէժ Մարազանց .
Դամբան լիցի յափշտակեալ նորա գահ ,
Երթ դու որդեակ , յանմեղութիւն քո վստահ ,

Ի Դիս վստահ , Դիք քեզ պաշտպան որդեակ իմ .
Այլ ո՛ւր իցէ վահագն , ո՛ւր քո մըտերիմ ,
Զի՞ ոչ փութայ , զի՞ յասպաղէ նա ցայսվայր : »
Յանձաւին խորս աճասպարեալ ոմըն դայր ,
Եւ էր վահագն . « Եղբայր , ասէ , վեհ դըշխոյ ,
ժամ արտասուաց չէ այս , ժամ է գործելոյ .
Կազմ յոտին կայ բանակն աշխոյժ եւ անսանձ .
Լքսէք ըզփող եւ ըզշաշխն աղեղանց . . . »
« Ահաւասիկ , ասէ Արբակ , պատրաստ կամ .
Օ՛ն ի հանդէս ելցուք եւ մեք բարեկամ : »
Եւ ջերմ ըզմայր իւր համբուրեալ կաթողին ,
Իրր ի գրօսանս ուրախ ի մարտ խաղացին :

Գ Ո Յ Ժ



Ճարտար դասեալ են զօրք Մարաց յերիս սիւն .
Անդ տեսանէր հանճար , խնամ , տքնութիւն
Վաթսունամեայ զօրապետին Բիւրասպայ ,
Որ ծեր ի փորձ եւ ի վաստակ , այլ տըղայ
Առոյգ ի սիրտ . որ ոչ յահուրդ , ոչ դանդաղ ,
Վսեմ ի փառս եւ ի վըտանդս էր խաղաղ .
Որ ի ճօճեւ ական ըզգունդըս սարսէր ,
Եւ խիստ ընդ իւրսն՝ այլ ընդ յաղթեալս մարդասէր .
Որ օրինաց նախանձաւոր եւ սլաշտպան ,
Ազատասէր , բըռնաւորաց ախոյեան ,
Վահագն՝ Արբակ փութով առ նա դիմեցին ,
Որպէս ըզհետ արչաւանաց գիշերին ,
Զոյգ հարազատ կորինք՝ դառնան ի քարայր
Առ ալեւոր եւ վաղեմի իւրեանց հայր ,
Ասաց նոցա Բիւրասպ . « Ի ձեռս ձեր թողում
Ըզսանձ մարտին . իմաստութեամբ քո բազում ,
Վահագն ո՛վ դու , ըղՄարս վարեա՛ս քաջամուխ
Դէմ թըչնամուրն , դու լեր ոգի եւ գըլուխ .
Իսկ դու Արբակ , կրտսեր տիով , հընազանդ
Եւ օգնական լեր՝ Վահագնի անվրկանդ .
Եւ ես ելից մարտեայց իբրու սոսկ զինուոր ,
Զի ոչ ժուժամ տեսանել եւս ըզվիշտ նոր

Եւ կոտորած զազգիս ծաղիկ հասակին .
Բազում տեսի մարտս , այլ լիցի այս վերջին ,
Ահ ընդէ՞ր ոչ ծածկեաց զարեւն իմ խաւար ,
Որպէս քաջաց հարազատաց իմ հազար .
Փառաց նոցին սցսօր եղեց ես ընկեր : » —
« Զլարդ խօսիս , Բիւրասայ , Վահագըն կըրկնէր ,
Նա մանաւանդ արժան է կեալ քեզ , այո՞
Թըշուառ Մարաց յոյժ թանկագին են կեանք քո
Թէ զմեզ թողուս դու՞ ո՞ ազգիդ հայր լիցի ,
Դու կռուեսցի՞ս եւ մեք յուսով կանացի
Եւ կաշկանդեալ թեւօք անգործ մընասցո՞ւք .
Զէ յաւելուլ այս Վահագնի փառաց շուք .
Ես մարտեայց , դու քաջ խորհրդով ինձ օգնեա՛ .
Զիք յաղթութիւն անօրինին Վըշտասսայ ,
Անկցին հըսարտք , եւ ազգք ազինք գիտասցեն՝
Կորուսանեն եւ Հայք ըզմարտ անօրէն : » —
« Բաջ խօսիս , ո՞վ Վահագն , այո՞ մեք առոյդ ,
Դոչէ Արբակ , մեք կռուեսցուք ընդ քեզ զոյգ .
Եւ դու Բիւրասայ , հրամանատար իմաստուն ,
Ի յաղթանակ ուղղեալ ըզգունդս Մարազուն ,
Միաւորեա՛ ընդ բազուկ մեր դու զխորհուրդ .
Տո՛ւր Վահագնի զհեծեւազօր դունդն յահուրդ ,
Ըզտիգաւորս ինձ տո՛ւր , եւ քաջ քո զորդիս
Ըզքաջափորձսըն Տեւտէոս , Վարբակիս ,
Ի գլուխ կացո՞ հետեւակ խաւըն զօրուն :
Աղեղնաւորք եւ շերտաւորք վայրասուն »

Աստի և՛ անտի , եւ ես կալայց ըղձակատ . . .
Հասլ՝ օն յառանջ , յապաղել եւս գործ է վատ : »
Յեւ խորհելոյ Բիւրասոյ կանգնեալ վեր ընդոստ ,
« Քաջ է . » ասէր , եւ փութացեալ ի բարձր օստ ,
Հրեշտակաց տայր նըշան ձգեալ ըզսուսեր ,
Եւ ալեղէղ Մարաց բանակըն շարժէր :
Սուր նեւ կազմեալ , վահան կապեալ , ձրգեալ լար ,
Եւ զօրավարք սուսերամերկ յերիվար
Իւրաքանչիւր ի գլուխ գնդին կազմ մընայր .
Յառաջադէմ նիզակաւորք եւասայր ,
Դիպաղեղունք աստի , անտի սլարսաւորք ,
Ըզհեւ նոցա զրոհ ըղգեցեալ ձիաւորք .
Իսկ գունդ կուսից հեծեալ յաշխոյժ նժոյգ սեւաւ ,
Ընդ ասպարաց քաջաց ծածկէր հովանեաւ .
Վահան թեթեւ եւ ալեղն է գէնք նոցա ,
Եւ շառամայր չքնաղատեսն Ստոսա :

Ըսկիզբն առից հնազա երգել եռանդուն ,
Հռչակելով ըղվեհից գործ եւ անուն .
Զողբս անկելոց , զողորմ մահունս եւ անմեղ ,
Ըսկիզբն առից սլատմել զարեանց ըզհեղեղ :
Ահա գոչեն փողք , զօրք խաղան գունդագունդ ,
Եւ ընդ ձիոց սըմբակօք դաշան առնու թունդ .
Յասպար քաջաց արեգակունք բիւր փայլին ,
Եւ գունատեալ թըւի արեւ զինչ լուսին .
Իբրեւ հատուն հասկաց արա խիտ , շողշողուն ,

Յուրան նիդակք Մարաց եւ յորդ լոյս զեղուն ,
 Եւ երեւին ահա Հայոց վաշտք անթիւ ,
 Սազաւարտից փետուրք ճօճեալ դիտախոխ :
 Ահեղադոշ աղաղակօք ընթանան ,
 Փարիլ , խառնիլ որպէս հեղեղք հրահոսան .
 Պըտոյտ պըտոյտ դառնան , շաչեն շառաչեն ,
 Փող ցոլ ցայտեն եւ փրփրբունք լուսեղէն :
 Անդ Բիւրասպեանըն Տեւտէոս գայ յառաջ ,
 Լայնակամար աղեղն ի ձախ , նետ մի յաջ ,
 Զոր արձակեալ ի թըշնամեաց կողմ , ասէր .
 « Զաւետաւորն յըղեմ առ ձեզ գուժարեր : » —
 « Ո՞ ուսոյց քեզ այդպէս խօսիլ համարձակ ,
 Գոչէ անտի հայկազն Արայ սպառանեակ ,
 Հաւատարիմ իշխան աղգին Մանաւազ .
 Ո՞վ աղգ երկշոտ եւ մարդախորշ , շուտավազ
 Իբր եղջերու , յանտառ եւ յորջս է քո յոյս ,
 Եւ յըստուերաց իսկ աղեղանց մեր տաս խոյս : »
 Յերկուց կողմանց տեղայ նետից յորդ տարափ .
 Տարածելով ի դաշտին մութ եւ սարսափ .
 Ճռնչէ օդ զերթ սպառառեալ առագաստ ,
 Եւ մռնչեն ուժգին՝ անկեալքն ի տապաստ .
 Ապա ցոլան վաշտքն ալէկոծ որպէս ծով .
 Յառաջ դիմեն ըզնիզակունս շարժելով ,
 Խըրոխտանօք հասեալ ճակատ առ ճակատ ,
 Դէմք թունաբուխ , արիւն ցայտեն աչք հըրատ ,
 Գոռողաբար նախ ըզմիմեանս ականարկեալ ,

Ըզտէ՛գ ապա ի սիրտս ուղղեն անսըխալ .
Վանին վահանք՝ սուրեակ կոփամամբ ահագին ,
Յնցին բանակքն երկու եւ յետս ընկրկին .
Քաջ ընդ քաջի դիպեալ , վէր տայ եւ առնու ,
Ոչ վերջօտնէ՛ հասեալ ի դրունս խակ մահու :
Անդ սատահեալ հին ակոյեանք՝ հըսկայք սէգ ,
Պողովատեայ սուր խորտակի՛ փշրի տէգ .
Զըրահապատ լանջք բաղխելով սրտան ,
Եւ երիվարք փըռնչելով փսրտան :
Տեսիլ արեան որ յորդ ըզբաշտս սուողէ ,
Ըզվրէ՛ժ սրտից դառնացելոց բորբօքէ .
Վիրաւորեալք անկեալ՝ կանգնին երազունք ,
Վէրք կեղեքեն , դառնան հըզօր առիծունք .
Կողապատառ թաւալին հուսկ , աչք նըւող ,
Հոսէ արին՝ ընդ նըմին կեանքըն դանդաղ ,
Զաւաղ կրճեն եւ հառաչեն աղեկէ՛ղ ,
Յուրտ դիակունք շեղջ՝ կուտակին դէ՛ղ առ գէ՛ղ .
Վայելչագեղ ո՞ Հայկազուն է դա քաջ
Որ մահ սփռեալ ըզՄարս վանէ ձախ եւ յաջ .
Խորխոռունի մի՛ քաջալանջն է Գիսակ
Որ շարժելով հըզօր բազկաւն ըզնիզակ ,
Լուծէ զվրէ՛ժ աւաղ Եղբօր սիրական
Անկեալ ի մարտ՝ զոր ետ Մարաց մեծ Տիգրան .
Յուսն իջանեն ճօխ դանդուրք , աչք կաթոգին ,
Աչք բոցակաթ յորում փայլէ հայ ոգին .

Ոգի վսեմ՝ զոր հայրենեաց մեր հող տայ՝
Զոր խաւարէ ոչ գերութեան վատ շրջթայ ,
Խորտակի տէգն , առնու սուսեր մահաչող ,
Յոսկեր Մարաց իջուցանէ ահ եւ դող ,
Բազում հարսանց յաջաց քամէ զարտասուս ,
Սաւար ածեալ բազում մանկանց յարչալոյս ,
Եւ փախտեայ զլարբակիտայ առնէ հրոս ,
Զայս կոտորած տեսեալ՝ պակնու Տեւտէոս ,
Զի սակաւիկ եւս ի զօրուն տիրէր ահ
Որ չարագոյն էր առաւել քան ըզմահ :
Զըգէ զաղեղն՝ ընտրեալ սըլաք եռանկիւն ,
Խոցեալ ներկէ Խորխոռունւոյն զուս յարիւն :
Սրտմտելով քաջաբազուկըն Գիսակ ,
Յառիւժ փոխի , զսուսեր բարձեալ զինչ կայծակ ,
Ի մի հարուած զասսար զըրահ կործանէ ,
Եւ կոչելով ըզՄարաց քաջս յանուանէ ,
Հարազատին ի մահ զոչէ անխընայ ,
Անդ իշխան Մար՝ կըւաքս յառաջ ընթանայ ,
« Խորխոռունիդ , գոչելով , զի՞ վատաբար
Ըզսուր մըխես ի պատանեաց կող տրկար .
Կըւաքս եմ ես , յԱշդահակեան դոռ ճակատ ,
Յիմոց բազկաց անկաւ քոյին հարազատ ,
Դոփէր դոչէր եւ նա իբրեւ քեզ հըպարտ .
Դո իսկ հասեալ է մահ , հսպա , եկ ի մարտ ,
Ե՛կ ընդ իս օն , թէ է բազուկ քեզ եւ սիրտ » : —
« Եւ ես խնդրեմ ըզքեզ , կարկեաց , հըսկայ բիրտ ,

Գոչեաց Գիսակ ըսպառնալից սէգ ահամբ ,
Տաց զմարմին քո զանհեթեթ շանց ի ջամբ ,
Տարայց ըզգլուխդ ի յաղթանակ սըրոյս ծայր .
Հապահ կազմ լեր առից ըզվրէժ քո , եղբայր ,
Եւ շեշտ ըզսուր ի կըւաքսայ մըխէ կուշտ ,
Անկանի հէքն հեղձամիճուկ , արիւնոուշտ .
Ընկերք նորա բարձեալ ողբով զաղաղակ
Խուռն ընթանան եւ սաշարեն ըզԳիսակ ,
Տէգ եւ սուսեր ի գլուխ նորա կուտին դէզ .
Աւանդ Գիսակ , հօր քո աւանդ , աւանդ քեզ ,
Մութ պատեցաւ ծաւի մեղոյշ քոց աշաց ,
Այլ հասեալ Հայք , վանեն ըզՄարս անտի՛ բաց ,
Եւ յուսաբեկ , արաում ի սիրտ , գլխակոր՝
Պար առնեն շուրջ Խորխոռունոյն վիրաւոր
Որ հեկեկէ ի ձայն դողդոջ եւ տըկար .
« Ահա պատէ , եղճուկ , զաշկունս իմ խաւար ,
Ահ դոյժ առէք երթայք պատմել իմ հօր հէք ,
Թէ որպէս քաջ մեռաւ Գիսակ ասացէք
Թէ զվրէժ մահու խնդրեցի ես եղբօրն իմ
Տո՛ւք ինձ զաջ ձեր , եւ արդ ուրախ մեռանիմ : »

Յաջ թեւ Մարաց բանակին մարտն է ահեղ ,
Սիռին մահունք , հոսէ արիւն գինջ հեղեղ .
Հրանտ Բըզնունի անտի Հայոց կայ պաշտպան ,
Եւ Վարբակիս ատտի նըմին ախոյեան ,
Յայնժամ Վահագըն մօտ հասեալ առ Բիւրասպ .

« Տէս ահա քաջդ, ապէ, տես վատըն՝ Վըչտասսայ
Որ թաքուցեալ ի վըրանին խոր, հանդարտ
Աջօք դիտէ զարի արանց մահ՝ անպարտ .
Եւ մինչեւ ցերբ՝ որպէս երկչոտ պատանի,
Դատարկ նըստայց ի վտանգաց մեկուսի .
Դափրէ Սեւակն իմ սրտմտեալ անհամբեր,
Հասլա՛ երթայց ըզգօր եւ վըրան տալ յաւեր,
Դիք ինձ սաշտպան, ինձ ոչ զօրեն սուր եւ նեւ,
Փութայց աղէ՛, հեղուլ զեղուլ զարեանց զեւ,
Եւ ամբառնալ դիականց շեղջ առ շեղջ կոյտ . » —
Եւ Բիւրասսայ . « Ոչ դիականց շեղջ է՛ մեզ փոյթ,
Այլ նըկրտիլ ըզՊարսիկն այն ունել նախ,
Եւ զօրավարն անկեալ, տեսցես յաջ կամ ձախ,
Որպէս հողմաց վարեալ տերեւս շէկ աշնան,
Զօրք անտէրունջ զարձցին ի ճեպ ցիր եւ ցան .
Արդ լուր խորհուրդն իմ որ բերէ մեծ օգուտ .
Դու ի ծածուկ յանտան աղէ՛ աստի մուտ,
Շրջան տուեալ անտի Արբակ թաքթաքուն
Բզհեւ լերին հըսկեսցէ կազմ եւ արթուն .
Եւ քաջաղեղն Ատոսայ գունդ կուսական,
Վըտիտ պատուար կացցէ Հայոց յանդիման .
Երբ Հայք դիմեն յառաջ, Արբակ ի թիկանց
Հալածեսցէ, եւ դու աստի հատցես զանց .
Աստի անտառք, անտի լերինք եւ անդունդք,
Եւ յորոգայթ մեր Վըչտասսայ անկցին գունդք : »
« Կեցցես Բիւրասսայ . » ասաց Վահագն, եւ նըչան .

Եւ վաշտք զանտառս եւ Մասեաց զանցրս կալան :
Յայնժամ կուսանքն անողնական՝ առանձին ,
Եւ ամաչկոտ զաչս ամեն շուրջ ցաւադին ,
Որպէս երբ մայր հանէ զօրդեակն ի դըրկաց ,
Տարակուսեալ մանուկն հայի թեւարաց :
Եւ Ատոսա հեծեալ յաշխէտ ի նըժոյգ ,
Քաջալերել զընկերս փափուկ եւ առոյգ :
« Օ՛ն սըլասցուք քորք իմ փառաց յասպարէզ ,
Մայր Անահիտ ահա յերկնից դէտ կայ մեզ ,
Նըմանեսցուք քաջասիրտ մօր մեր քնքուչ :
Յաղթեսցուք կամ մեռցուք , եւ մահ է անոյչ ,
Եթէ մահուամբ մեր ճոխասցի յաղթութիւն : »
Կուսանքն անդէն ճերմակ ծըղեաց որպէս ձիւն
Պատեալ ըզսանձ եւ զտղեղունքս լարեալ ,
Վարս հողմածուփ եւ քող սարդեալ ծալ ի ծալ ,
Աչք բոցավառ , արօթելով կուրծքըն սարկեչտ ,
Իրրեւ զերամ աղաւնեաց ճախր առեալ շեչտ ,
Կայծակնացայտ թօթափեցին նետս անվրէպ՝
Եւ սուրացեալ երազ դարձան յեաս ի ճեպ :
Կրկին լարեալ յարձակեցան անվեհեր ,
Սրտմտեցան Հոյք , եւ Վշտասպ անհամբեր ,
Ըզէն ծելոց զանխոնջ ըղզունդն ամեհի ,
Յառաջ մղեաց՝ դիպեալ ժամու սլատեհի :
Կուսից բանակն ընկրկեցաւ զարհուրմամբ ,
Որպէս վանեալ ի մըրըրկաց թեթեւ տմբ :
Նետահարեալք փախեան աղջկունքըն թեթեւ :

Եւ այլք անկան եւ կորուսին անդ զարեւ ,
Մինչ վայրենեաց գունդք արիւնոուչտք տուեալ գրոհ
Բըռնավիժեալ կուսանքն ի թոհ եւ ի բոհ ,
Եւ ընդ թաթլով երկվարաց սըրընթաց
Կոտորէին՝ ճիչ բառնալով վայասաց ,
Եւ թանձրանայր հոծէր մահու սեաւ մըռայլ ,
Ատոսայ զոյգ աչկունք յանկարծ լուսախայլ ,
Շողչողացին , եւ կանգնեցաւ՝ շնչեալ բոց ,
Տէգ ի ձեռին , ի մէջ Մարաց եւ Հայոց .
Մահ ըսպառնայր ում գոյր յառաջ , եւ մահ տայր ,
Ըզյանդբզունս անցուցանէր տիգին ծայր .
Յետըս դարձան քաջք ամօթխած , գունաթափ ,
Այլ պոստեալ ըզյօն յառաջ դիմեաց Բար .
Կոփեաց վահանն ընդ նիղակին , եւ ցոլաց
Սուր Հայկադին իբրեւ կայծակն ամպասլաց .
Ծըխեաց արիւն Ատոսայ ջերմ , եւ անկաւ ,
Ըզգեղեցիկ հասակ շափեալ նիղակաւ .
Սաղաւարտին եւ զբրահայըն կապանք
Խզեալ ի յայտ բերին ճակատ լուսերանդ ,
Նորաբողբոջ լանջք ուռուցիկ եւ ճերմակ
Շաղապատեալ ի ճապաղիս կարմրորակ .
Խառվեցաւ եւ Բարայ սիրտ ապառոււմ .
Արկեալ ըզսուր ի սլատեան , խոյս ետ տրտում .
Վերահասեալ Տեւտէասի՝ ցաւագին
Մատչի առ կոյսն որ մաքատէր ընդ հողին ,

Ձոր գրկելով ի բանակէն մէկուսի
Հանդուցանէ ընդ հովանեաւ թուխ սօսի ,
Եւ յեց ի տէգ դիտէ լուիկ , գըլխակոր ,
Որպէս ի թերթ վարդի մեղուակ լուսաւոր ,
Դողայ հոգեակ կուսին՝ հասեալ ի շրթունս .
Բացեալ ասլա կամարածեւ սեաւ աշկունս .
« Հատանին թելք կենացս ... այլ Բար ինձ մահ ետ ...
Բար դիւցապունն ... եւ այն ինձ փառք են յաւէտ ... »
Յայսովայր ասէ եւ արձակէ զվերջին շունչ .
Առ ցուրտ մարմնովըն սիռելով ծաղկանց փունջ ,
Լայն ասպարաւ ծածկէ քաջն այն գթատէր ,
Ի սիրա երկրի՝ ցըցեալ նիզակն սուրնթեր ,
Նըշան սըգոյ , արձան մահու անվրկանդ .
Եւ փութացեալ ի բարձրադէտ դարեւանդ .
Ձայն ի կրծից հանէ ահեղ՝ զինչ կորուն .
Որ յանդնդոց արձակիցէ մունչիւն .
« Վահագն , արի , ժամ է պատեհ , եկ հասիր » .
Յաղաղակէ աստի պակնուն քաջընտիր .
Սկայք Հայոց , թոյլ են բազուկք , ոտք դանդաղ .
Եւ Վըշտասպայ յոսկերս անկեալ սարսուռ պաղ .
Յետըս գոչէ զբանակն ի ձայն շիփորայ .
Ձի հասանէր յուշիկ գիշեր ի վերայ .
Թափառական կրմոգ ընդ ձոր եւ ընդ սար .
Ըզքաջ Վահագն անդուլ խնդրէ վայրասպար .
Այլ նա հեռի եւ մոլորեալ թափառի ,

Զի խարեցին ըզնա Ոգիք անտառի ,
Ուր վարագոյր միդաց սլատեալ հոժ նսեմ ,
Եւ ուր ահա դըժոխածին , սեւադէմ ,
Սոսկավիթիտար վիշապք՝ շնչեն ծուխ եւ բոց ,
Տէգ ստամուռնք նոցա , ժանիք զինչ հընոց ,
Լեզուքն իրրեւ ջուխտակ սըլաք հըրեղէն ,
Տըտունք նոցա ճկուն՝ ըզժառըս բախեն :
Բայց անյողգողդ է սիրտ մեծին վահագնի ,
Ըզսուր ձգեալ ահեղակերպ վեր կանգնի ,
Ի մէջ հրոյ եւ բոցոյ ինքն անհալ է .
Ըզհաստ մայրիս ընդ վիշապին դաւալէ
Ի մի հարուած , եւ յանդընդոց խորածոր
Հեղեղածուփ խաղայ արիւն սեւա սլտոր՝
Մըժըմբախաւըն նեխելով հոտ եւ ծուխ .
Քաջն ոտնակոխ խեղդէ զվիժեալս թունաբուխ ,
Ոչ դադարեալ մինչ կոտորէ զամենայն :
Իսկ տարածեալ բազուկս յերկին՝ ջերմածայն
Ըզբարեգութ . Դիս տղաչէ ծերն Արմոգ ,
Եւ աքոտասուօք յայտնէ զարտին ըզմորմօք . —
«Տուք զվահագն իմ , առէ , Դիք զոր սլաշտեմ .
Առաջնորդեմ նմա , Հրեշտակ երկնաճեմ ,
Թէ մուրեալ է յանտառի , հանն ի լոյս ,
Դարձո՞ զհայկազն աղէ՛ ի գիրկ ծերունւոյս : •
Եւ հրեշտակին ի դութ շարժեալ խանդակաթ ,
Հոլաթեւէ յազատ Մասեաց ի դադաթ .
Եւ ի բարձանց զաջ կորկառեալ լուսերանգ

Առաջնորդէ քաջին յուղի անվտանգ :
Ի մութ կամար երկնից ծագէր լուսին դարկադէմ
Եւ Մերովէ մենիկ ի դաշտս առնոյր ճեմ .
Ունկըն կախէր հեծեծանաց անկելոց
Եւ ի հեռուսս դիտէր ջահից զաղօտ բոց .
Յողւոց հանեալ , հեծեծէր սիրտ ի տագնաօլ
Եւ ի Մարաց ահա դիմէր ոմն ըշտապ .
Տեսեալ ըզնա գոչէր աղջիկն անհամբեր .
« Մի՞ դու , ո՞վ քաջ , հրեշտակ իցես գուժարեր .
Եւ զի՞ հնչէ ի բանակին աղաղակ .
Ասա՛ թէ՛ ո՞ղջ է՛ վահագն , ո՞ղջ է՛ Արբակ : »
« Ողջ են այո՛ , կրկնեաց սյրն այն անծանօթ ,
Այլ զԱտոսայ , եղս՛ւկ բերեմ մահու բօթ : »
Եւ մատնանիչ առնէր զտէգըն կանգուն ,
Ուր ընդ սօսիւ կոյսըն նընջէր մահու քուն
Գոյն Մերովեայ շրջեալ մընայր իրր արձան .
Ապա սթափեալ վաղէր , բարձեալ ըզվահան ,
Գրկէր զանշունչ դիակն ի ջերմ ի համբոյր . —
« Ո՛հ Ատոսա , հէ՛ք Ատոսա , սիրուն քոյր ,
Վայ ինձ , մեռա՛ր , պատեաց զքեզ ցուրտ թմրիբ ,
Աթոռ եղեն՝ ժանտ մահուն այտք քս կարմիր .
Ատոսա՛ , քաղցր իցէ՛ մահուն քուն , ասա՛ . . .
Քաջ խմանամ , եղս՛ւկ , չես դու Ատոսա .
Վարդ գունաթափ յոր խեթիւ ակն արկ արեւ ,
Թըռւար թիթոան պէս՝ աստ թողեալ ըզկեղեւ .
Այլ միթէ՞ քօ հօգեակ հանգոյն հոտ ծաղկի ,

Ընդ շունչ հողմոց խառնեալ յերկին ցրուեսցի . . .
Ո՛հ ոչ, . . . յերկինս ես դու եւ հեշտ ինձ հայիս ,
Փոխեալ դու յաստղ՝ անուշակ լոյս կաթեա յիս . . .
Ժըպիտ մի եւս , ժըպիտ մի տուր ինձ միայն . . . »
Եւ աստ ահա մեծաղաղակ յանկարծ ձայն
Յունկն իւր հընչէր՝ նըման երկնից որոտման .
Շառաչէր օդ , Աշդահակայ ուրուական
Ելեալ յամսոց , կանգնէր ընդդէմ Մերովեսայ :
« Դ՛ուստր , առ ի՛նչ լաս , գոչէր , որ վատ է՝ լոկ լայ .
Օ՛ն , յտաքս կայց , յուչ քեզ ոյր դուստր իցես դու .
Ե՞րբ խնդրեսցի Աշդահակայ վրէժ մահու . . .
Տակաւին կեանջ Տիգրան , անհաշտ իմ սոսիս .
Ո՛չ , ո՛չ , մեռցի Տիգրան , զի զթոյն իմ եւ զոխ
Անդ յանլոյս վիհն՝ ի գլուխ նորա թախեցից .
Դ՛ուստր իմ , դ՛ուստր իմ , քեզ արտասուք հաճոյից
Արիւն լիցի լոկ Տիգրանայ . ա՛հ զարիւն ,
Զարիւն կամիմ , այս լիցի ձեր յաղթութիւն : »
Լռեալ ապա ցնդէր ըստուերն իբրեւ ծուխ :
Իսկ Մերովէ ծածկեալ ձեռօքն ըզգլուխ
Կայր գետնամած . ապա դիմէր ի քարայր ,
Եւ առաջի սուրբ սեղանոյն անկեալ լայր : —
« Յնորք սիրոյ , օ՛ն անդր , հեռի ի սըրտէս .
Մայր Անահիտ , գըթա՛ յարտօսր իմ , ո՛հ տես ,
Հեծեմ , աւաղ , նետահարեալ ի բիւր խոց ,
Նւ ոչ կարեմ տանել իմ դառըն ցաւոց .
Կամեցայ զսիրտ իմ բերել քեզ ի նըւէր

Այլ ի վաղուց՝ զայն վահագնի զոհեաց սէր ,
Եւ արդ ծիւրեալ մաշիմ յարտօսր եւ ի վիշտ .
Այլ դու խնայեա՛ , դու բարեգութ մայր ես միշտ : —
« Դո՛ւսոր իմ , ընդէ՞ր հեծես դու , զի՞ լաս այսգոյն . »
Ասէր Անոյշ ելեալ ըզհետ սեղանոյն : —
« Լամ , ոչ միթէ՞ սպանդխտին այս է բաժին .
Լամ զԱտոսա , մայր , որ չէ աստ այլ յերկին .
Ի քաջս հազար , ի բիւր կուսանս գեղեցիկ ,
Մահ Ատոսայ է քան զամէն երջանիկ .
Մահու փառաց նորա եւ ես եմ կարօտ . . .
Յրուի խաւար , ահա ծագէ առաւօտ .
Տո՛ւր ինձ ըզգէն Ատոսայ , մայր , տո՛ւր զասպար ,
Եւ օրհնեալ զիս , դի՛ր ի փառաց ճանապարհ : » —
Եւ համբուրեալ Անոյշ ըղկոյսն ի ժպիտ ,
« Ե՛րթ , դո՛ւսոր , ասէր , եւ գքեղ կոչէ Անահիտ : »



Վ Ր Է Ժ



Այգուեն այգուեն ել Բար ի բարձր ոստոյ սար ,
Ըզէեա նորա դուսան երգող ի քընար .
Զասպար կախեալ ի ծառ՝ յերկիր տէգ կանգուեն ,
Ասէ . « Երբ յայս շողան նշոյլք արեւուն ,
Իջցուք ի դաշտ , զի մարտ տացի մեծ այսօր
Եւ գետ արեան ծածկեսցէ զդաշտ եւ ըզձոր :
Արգ դու , դուսան , պատմեա՛ ինձ , զի՞նչ անդ կարկառ
Կուտակադէզ կանգնեալ ի մէջ ջուրց պայծառ »
Յայնժամ որդին երգոց , տխուր ի հազազ ,
Հարեալ բամբիւն աղու , երգեաց զայս նուազ ,
« Ա՛ստըղ դու չէկ վառեալ ճեմես հեղասան
Յարչալուսոյն ի ծոց մաքուր գործեալ սահ ,
Եւ խոնարհեալ հայիս ի ջուրըս վըճիտ
Ծաւալելով անոյշ նըշոյլս եւ ժըպիտ .
Որ զոսկեփունջ սըփռեալ ըզվարս քո յալիս ,
Ծագես , ծածկիս , յամսոց վերայ թաւալիս ,
Համեստ կուսին Զարուհւոյ մի՞ դու ոգին
Որ մենիկ՝ զաշս ածելով շուրջ ցաւազին
Խնդրէր զանխուլ ըզսիրելին իւր զԱրայ ,

Մինչ գիշեր սեաւ պարզէր ըզթեւս ի վերայ
Այդ կարկառին՝ եւ սահէին ժամք դանդաղ .

Այլ սիրելին իւր Արայ ոչ գայր աւաղ .

Եւ անդ նստէր Զարուհի լայր յուսահատ ,

Աղէկոտոր կարգայր զայս դառն գանգատ : —

« Ահա գիշեր , եղնիկ հիքիս անտէրունչ .

« Մանչէ գետ , չչեն հողմունք ցրտաշունչ .

« Ինձ ոչ խրճիթ է անձրեւաց պատսպար .

« Եւ աստ մենիկ նստեալ կոծիմ վայրասպար :

« Ըզգորչախայտ ամպոց պարզեալ մթին քող ,

« Լուսին աստեղք , ծաւալեցէ՛ք լոյս եւ շող՝

« Յուղղել ըզքայլս անդ ուր ննջէ յանոյշ քուն

« Վաստակարեկ յորսոյն՝ Արայ գիւցազուն ,

« Հաւատարիմ բարակք՝ աղեղն առնթեր .

« Այլ ես մենիկ նստիմ աստէն անհամբեր :

« Հեղեղք ամպրոպք հեծեն կոծեն մեծագոչ ,

« Եւ սիրելւոյս ձայն հասանէ առ իս ոչ .

« Զի՞ յապաղէ Արայ , զխոստմունս մոռացաւ .

« Աւասիկ դաշտն , աւասիկ դետն եւ անձաւ .

« Տարաժամու երգուար Արայ , գալ առ իս .

« Ո՛ւր ես հապա , ո՛ւր մողորեալ թափառիս .

« Փութամ ըզհետ քո առ վիշտ հօրն իմ անհող .

« Ոսոխք են տոհմք մեր ի վաղուց անողոք .

« Այլ ըզմիմեանս սիրեմք մեք , չեմք թշնամի

« Աղէ՛ լուեաց հողմ , լուեաց գետ վայրիկ մի ,

« Զի հնչեսցէ ձայն իմ ընդ դաշտ եւ անտառ .

- « Լն՛ւր ինձ Արայ , ըզբեզ կոչեմ շնչասպառ ,
« Աւասիկ ծառն , աւասիկ ժայռն , ահա ես ,
« Եւ դու Արայ , քաղցր խմսէր , հիմ յապաղես ,
« Ահա կոհակք գետոյն ցածնուն եւ հաշտին ,
« Եւ բոտոտաց երամ խայտայ ի դաշտին .
« Ոչ եւս հողմաւեք հեծեն ի կոծ եւ յաւաչ ,
« Եւ ի հեռուստ հոսեն սահանք ի կարկաջ .
« Ծագէ լուսին , եւ ի հովտին ցոլայ դետ ,
« Փարատի մէգ եւ ցըցին ժայռք անհեթեթ .
« Այլ ի ժայռս անդ ոչ տեսանեմ ես զիրայ ,
« Ոչ ըզգալուստն ինձ աւետեն շունք նորայ ,
« Իսկ ո՞յք դոքա ընկողմանեալք ի ժայռ անդ
« Արայ է դա . . . եւ միւսն . . . եղբայր իմ Երուանդ . . .
« Ո՛վ հարազատք իմ ձայն տո՛ւք , տո՛ւք ինձ դարձուած .
« Այլ լուռ են , լուռ . ո՛հ , սեաւ սպտէ զիս կասկած .
« Բացէ՛ք զաշկունս եւ ժպտեցէ՛ք ինձ աղէ .
« Այլ լուռ եւ ցուրտ սիրտ նոցա ոչ բարախէ
« Ի կուշտ նոցա մխեալ է խոր ժանտ սուսեր .
« Հիմ դու Երուանդ , սիրելոյս մահ արբուցեր ,
« Ի վրէժ վարեալ ոտիս անհաշտ եւ անդութ .
« Հիմ դու Արայ , յարեւ եղբօրս ածեր մութ
« Ընդ գեղ քո մարդ առ հասարակ հիանայր .
« Սարսափ ի մարտս էր եւ ահեղ իմ եղբայր .
« Արդ հաշտեցայք , արդ բարեկամք ի մահու
« Հոգիք ձեր զոյգ ընդ զոյգ թռեան երկնաշու .
« Այլ հիմ թողէ՛ք զիս աստանօր Օն եւ զիս

« Բարձէ՛ք , տարէ՛ք յազատն ի վեր ի Մասիս ,
« Արի՛ք ըստուերք մահու եւ տո՛ւք պատասխան ,
« Յո՞ր վայր իցէ՛ք եւ ո՞ւր է ձեր օթեան
« Այլ ոչ բերէ հողմիկ ինձ ձայն իսկ նուաղ ,
« Եւ ես մենիկ անմխիթար լամ աւանդ :
« Փոս փորեցէ՛ք ինձ բարեկամք սգաւոր ,
« Ըզքուն մահու ես ննջեցից աստանօր .
« Թէ քաջք մեռան , առ ինչ ինձ կեանս իմ եւ գեղ
« Աստ ննջեցից եւ ես առ խուռն այս հեղեղ :
« Յորժամ պարզէ գիշեր ըզքող թանձրահոծ ,
« Եւ ի հովտին հեծէ հողմիկ դառնակոծ ,
« Ողբոց հողմոյն լիցի հողիս իմ հաղորդ .
« Գացցէ վաղիւ եւ խնդրեսցցէ զիս որսորդ ,
« Այլ ոչ գացցէ զմտրմինս ի խոր անդ ակաց :
« Այսպէս գուսանն ազգու երգեալ եւ լռեաց .
« Եւ ձայն նորա հեշտ եւ աշկունքն էին հուր :
« Անոյչ է երգ քո , ասաց Բաբ , այլ տխուր ,
« Տխուր եւ ես , զիւրդ խռովիմ ս'չ ցայսվայր .
« Զապագային քող պատառել ինձ ո՞ տայր .
« Փառաց մի՞ սիրտ իմ թէ մահու է կարօտ
« Այլ ո՞ն իջցուք , ահա ծագէ առաւօտ : »
« Եւ առ վրանս Հայոց հասին երկոքեան .
« Գունդք կազմեցան եւ ձայն բարձին խնդութեան .
« Այլ ետես Բաբ զի լոկ Տիրան խր եղբայր ,
« Իրբեւ մանուկ՝ արտում նստեալ անդ ողբայր : —
« Զի՞ է , եհարց , զի՞ արտասուես եղբայր քաջ ,

Մինչդեռ զուարթ խաղայ բանակ մեր յառաջ : ք —
Իսկ նա Վրաց երթ, ի բաց օն, եւ մի գլխի ,
Զանբուժելի ցաւ սրտիս մի կեղեքեր .
Ե՛րթ ի բաց դու , թո՛ղ ինձ ողբալ յուսահատ .
Զեմ ես եղբայր քո՝ ոչ դու իմ հարազատ ,
Զի իջուցեր մութ Ատոսայ յաչաց լոյս ,
Գառնացուցեր ըզկեանս , հտտեր զիմ քաղցր յոյս .
Տկար՝ մատաղ կուսանք ի Մարս են յուրով ,
Ե՛րթ հսկա երթ փորձել բազկացդ ըզկորով : ք
« Տիրան , կրկնեաց Բար , եղնկ քեզ , ցաւօք կոյր ,
Մի՛ զիս մերժեր եղբայր , եւ տո՛ւր ինձ համբոյր .
Այսօր մարտեայց ընդ քաջալանջ այր հըզօր .
Ո՛հ եւ իմ ժամ մահու հասեալ է այսօր : ք
Այլ ոչ եղբօրն անսայ Տիրան անողսք ,
Գերի ցաւոյն՝ հեծէ՛ծէ սիրտ ի մորմսք :

Բանակքն երկու տեղան նետից յորդ անձրեւ
Եւ թանձր ըստուեր ածեն յերկինս եւ յարեւ .
Մանրանայ օդ աղաղակօք վայրենի ,
Ընդ սմբակօք դաշտըն թնդեալ տատանի .
Բաղխեալ վահանք ընդ կուռ վահան , զէն ընդ զէն ,
Կարծես մրրիկք դալիս մղեն եւ յուզեն ,
Եւ իբր հողմոց ահադնալուր մունչլուն .
Շչէ հնչէ լայնալրճիցն շկահլուն :
Անդ պատահին միմեանց՝ կայտառ ակոյեան ,
Բըզնունին Հրանտ եւ վարբակիս Բիւրասպեան .

Եւ Հրանտ ասէ . « Քաջ մրցեցաք մեք յերեկ ,
Այլ ոչ դու , ոչ ես յաղթեցի . հա՛պա , եկ .
Կրկին ըզբազդ մեր կշռեսցուք . ըն մատի՛ր : »
Յաջն երկուցուն շողայ կայծակըն կարմիր ,
Յարձակելով կուրեն նիզակք մեծասաստ ,
Վիրաւորեալք անդ թաւալին ի տասպաստ ,
Հրանտ խոց առեալ յուլն , եւ ի սիրտ Վարբակիս ,
Եւ շողախին յարեան իւրեանց ճապաղիս .
Այլ անդ անկեալք՝ կարկառելով միմեանց զաջ ,
« Քաջ ես . » ասէ Հայկազն . եւ միւսն , « Եւ դու քաջ : »
Եւ թշնամիք ի կեանս , ննջեն մըտերիմ ,
Երկաքանչիւր նոցա փորեալ մի շիրիմ :

Ի վեր զերեսս ամբարձ Արբակ եւ ետես
Զի՛ Մարազանց բազումք անկան քաջապէս .
Խանդազատեալ ի մահ իւրոց սիրելեաց .
« Ո՛վ դիւցազունք վեհք եւ պաշտպանք իմ , գոչեաց ,
Հերի՛ք ըզկեանըս ձեր դընէք յիմ վերայ ,
Եւ զի՞նչ պիտոյ հէք հայրենեաց՝ հէք արքայ .
Յաղթութիւն խկ լիցի յաւէրժ ինձ ի սուգ ,
Սեաւ յաղթութիւն զոր գնեսձիք արեամբ դուք .
Յարեան ձերում ոչ կանգնեցից ես զիմ գահ ,
Ոչ կամիմ զայդ , ազատութիւն ինձ կամ մահ ,
Միայն լիցին արդար բաժին իմ եւ յառք : »
Ասաց . աչկունքըն յայլեցան բոցավառք ,
Եւ յարձակեալ՝ ըզկոյտ զինուց եւ սուսերց

Հար, խորտակեաց, խղեաց, վշրեաց, ցրուեաց, հերձ,
եւ արութիւն բազում գործեալ նիզակաւ ,
Ըգբաջ բազում իջոյց ի գուբ մահու սեաւ ,
Սաղացուցեալ հեղեղածուփ զարեան ուխ :
Ըզհետ եղբօր իւրոյ զիմէր միջամուխ ,
Կոյս Մերովէ՝ քան զԱնահիտ իսկ թեթեւ .
Դէմքն ի զրահ՝ զինչ վարդ կարմիր ի տերեւ :
Վարսք իւր վէտ վէտ սփռեալ ի նուս նրժուգին .
Աչք իւր սիրով եւ արութեամբ բորբոքին :
Եւ անդ որդի Կիրոսի՝ քաջ ախոյեան ,
Զոր ած Վըշտասոյ ընդ իւր յաշխարհ Հայաստան ,
Սէգն Արտաշիր՝ սիրող մարտի , սնդեալ գայ ,
Ըզտէգ բարձեալ՝ մսել ի սիրտ Արբակայ .
Այլ սա հաստատ յերիվարին՝ անխըռով ,
Պուղէ զհարուածն՝ ածեալ զաստար ըզգլխով .
Եւ զիւրն ապա ուղղեալ նիզակ անվըրէսլ ,
Ընդ կուշտ ձիոյն անցուցանէ ըզսուր սեսլ .
Դլրի հեծեալն ընդ երիվար իւր յերկիր ,
Այլ վաղվաղեալ յոտին կանգնի Արտաշիր ,
Եւ գոչէ . « Էջ , Արբակ , թէ քաջ իցես , էջ
Յերիվարէդ վայր եւ սլընդեալ ըզքո մէջ՝
Ե՛կ դու կըռուել ընդ իս բազուկ առ բազուկ : »
Եւ իջանէ Արբակ , Այլ վայ քեզ եղո՛ւկ
Արտաշիր . մի՞ լինիր ի գէնս ապաստան ,
Բօթ գուժեսցի ի հայրենիդ խոնաստան :
Ըզնիզակուճըս շարժելով յարձակին ,

Բախեն եւ տան միմեանց հաւրուած ահագին ,
Եւ նիգակունքըն խորտակին զինչ բիւրեղ ,
Յանժամ փարեալ ըզմիմեամբք պինդ եւ ուժեղ ,
Լանջ ընդ լանջի մենամարտին զինաթափ .
Կծկին , կանգնին , կըռուփք տեղան զինչ տարափ .
Կապուտադոյն ցցին քներց երակունք ,
Գալարելով ցածնուն յառնեն երազունք .
Այլ թուլացեալ ջիղք Արաաչրի՛ կըբի անդ .
Ի կուրծ նորա կոխեալ Արբակ անվրկանդ .
« Ընդ իս կռուեալ , ստէ , մանուկ անխոհեմ ,
Խնդրէիր քեզ փառս , արդ ի գլուխ քս թափեմ՝
Ըզսիրելեաց խնոց քաջաց վրէժ մահու .
Սէզ կիւրոսի որդի , ըզմահ սիրդ եւ դու : »
Եւ չըւատին ի կող մխեալ ըզլաղակ ,
Զօրք արձակեն ուրախութեան աղաղակ :

Զանտառային շարժեալ ըզյօնս , ճեպեալ գայ
Քաջադանդուր Բաբ սիգապանձն եւ սկայ ,
Ահեղազօր , բարձք եւ բազուկքն հաստաջիլ ,
Սրօխտ հայեցուածք եւ վեհ զխմացն է տեսիլ .
Յցեալ ի ծայր սաղաւարտին փետուրք թուխ ,
Զինչ ի Մասեաց սար բարձրացեալ թանձրր ծուխ ,
Զէնք եւ զըահքն ոսկեքանդակ եւ հարուստ :
Որպէս առխժ ակնարկեալ յօրսն ի հեռուստ՝
Վազեալ սուբայ , թողեալ ըզկնի գիակունս ,
Փչրէ զասպարս խորտակելով զաղեղունս ,

Եւ ամպք ծխեն ի սուսերէն ծիրանի ,
Վերջոտնելով Մարաց բանակ բեկանի ,
Եւ թիկնադարձ փութան բազումք ձեզ ի խոյս ,
Որոց ի զուր Արբակ կարգաց խրախոյս :
Այլ անդ Փրատտ՝ երխտասարդ գեղաշուք
Դիմէ ընդդէմ Բաբայ արբեալ Հին վրիժուք .
Տեսեալ ըզնա սիրուհին կոյս Փեղխմայ .
Վազեալ հասեալ կարիհառէ զձեռն իւր առ նա
Պազատանօք , արտասուալից , յուսաձատ
Փարեալ զոտիւքն աղաղակէ . « Մի՛ Փրատտ ,
Ըզ Հայկազունդ այդ մի՛ կոշեր յասպարէզ ,
Լնւր ինձ Փրատտ , հըօր է Բաբ քան զքեզ .
Ո՛հ մի՛ զգլխով խնով ամ եր քող սգոյ .
Խնայեա՛ դու յիս աղէ՛ , խնայեա՛ յարեւ քոյ : »
« Օ՛ն Փեղխմա , գոչէ՛ Փրատտ , զի՞ կոծիս .
Թո՛ղ ինձ կռուել , վստահ ի տէգ եւ ի Դիս ,
Թո՛ղ մեռանել ինձ կամ յաղթել , ոխոտս է այս .
Թէ՛ յաղթեցից՝ վառքս գրեալ յասպագոյս ,
Հարսըն լիցիս վեհագունին դիւցազանց : »
Եւ դիմադրաւ եզեալ անծոյժ եւ անսանձ ,
Հարեալ բաղխէ զսուսեր բազկաւ կորովի .
Բաբ անյողդողդ՝ ոչ տեղի տայ , ոչ խոսովի .
Եւ յուս նորա հարուած ամեալ կարեմէր ,
Ի հըպարտին կապտէ ձեռաց ըզսուսեր .
Այլ երբ կրկին զաջն ամբառնայ Բաբ անդութ ,
Հէք Փեղխմայ սլասէ զտշկունս խաւար մութ ,

Զարիւն տեսեալ եւ ըզվըտանդ սիրելոյն ,
Պակասէ սիրտ կուսին , դիմացն հատեալ գոյն ,
ԸզՓրաատայ սարանոցաւ բարի սերտ ,
Ըզփափուկ կուրծն առնել վահան սիրակերտ .
Իջանէ սուր Բաբայ , ահեղ քան զչանթ ,
Եւ զերկոսեան ի մի հարուած ցելու անդ .
Եւ շուրթն ի շուրթն ամիտիելով ի համբայր ,
Ժպտեալ անոյշ , անկեալ ննջեն քուն անդոյր .
Գրկախառնեալ ըզվմեանս քաղցր ի գորով
Եւ ի մահուն կարծես սիրել կամելով ,
Փեղխմա՛ , կոյս անմեղ՝ զեղով վայելուչ ,
Արիւնասցին սիրտք ընդ քո վէս սրբտառուչ ,
Եւ խնդրեսցեն ըզքեզ անտառք եւ հովիտ ,
Խնդրեսցեն զերզըս քո , զաչկունս եւ ժըսիտ .
Ջուրք խնդրեսցեն ըզկարմրորակ քո չրթունս ,
Վարդք եւ շուշանք ըզնրբաւարտ քո մատունս .
Անահտայ դուստր ամբիժ՝ հոգիդ էր փայլուն
Զերթ վըտակի ալիք վճիտ խոխոջուն .
Ա՛հ Փեղխմա զողտրիկ , սիրոյ նահատակ ,
Արիւնասցին սիրտք ընդ մահուդ յիշատակ :

Տեսեալ Արբակ ըզխողողումն եւ զարիւն
Անմեղ կուսին , զարթնոյր հոգւոյն բարկութիւն .
Եւ շարժելով իբրեւ կայծակն ըզսուսեր ,
Ի վեր վազեալ՝ դառնայր առ քոյր իւր ասէր .
« Չուառ կուսին տուր զվերջին դու սկատիւ ,

Մինչ ես փութամ՝ երդուեալ ի լոյս եւ ի տիւ ,
Ընդ Փեղխմոյ լուծել ըզվրէժ Ատոսայ ,
Ոչ մեկուսի դիտէր Վահագն ըզոտսա ,
Եւ ամպք ահա որոտացին , եւ հրեշտակ
Վեհին ըզթեւս տարածելով սալիտակ
Էջ խոյացաւ , դղրդեցան ի հիմանց
Լերինք , նշոյք ծաւալեցան ուստի անց ,
« Վահագն աղէ՛ դու , գոչեաց , քաջ լնր սանդ իմ .
Զի վտանգք մեծ սլատեն ըզքո մտերիմ ,
Հապա քաջ լնր , վիշտ կրեսցես դու բազում .
Այլ զարութիւն հարց քոց ի քեզ ես հեղում .
Մի դու վճռոց երկնից լիցիս սալստամբ ,
Եւ փայլելով ճոխասցին փառք քո քրտամբ : »
Ասաց եւ լոյս շրթամբքն՝ շունչ երկնային ,
Շունչ արութեան փշեաց ի դէմս Հայկազին .
Եւ կանգնեցաւ Վահագն աշխոյժ , սիրտ ի բոց .
Հայեցաւ շուրջ զի զօրացեալ քաջք Հայոց ,
Մարաց գընդին բեկեալ են թեւք եւ ճակատ ,
Բազումք անկեալք , բազումք խոյս տան յուսահատ :
Միայն Արբակ քաջն աննըկուն , անվհեր ,
Բիւր նիղակունս դիմագրաւեալ խիզախէր ,
Եւ զի որդի էր քաջութեան , ըզհամբաւ
Վատասրտի ժառանգել ոչ կամեցաւ ,
Անկաւ՝ այլ վերք ի սիրտ եւ գէնք ի ձեռին ,
Եւ ի Հայոց անկան բազումք ընդ նմին .
Խոնարհեցաւ Մարաց դրօշակ արծուեթոխ

Եւ բարձրացան աղիողորմ կոծ եւ ճիշ ,
Հառաչանաց ձայնք շարժեցին զանմահ Ռիս :
Ողբք եւ լալիք գղրդեցին ըզ Մասիա ,
Իսկ Մերովէ անմխիթար՝ զՍրբակայ
Վիրապատառ փարեալ մարմնով անըզայ ,
Յարին ներկեալ ըզխոսպոսիս սեւաթոյր ,
Ձեռաց՝ վիրաց եզբօր խրոյ տայր համրոյր :
Արտաճակիկ ի ձայն ողբոյն ապաժոյժ ,
Յուզի խոռովի Վահագըն քաջ ի սիրտ յոյժ :
Սեաւ բարկութեան ցոլայ յաշկունս հուր անգութ՝
Որպէս կայծակն ընդ հորիզոն երկնից մութ :
Ի գազաթուն սաղաւարտին ճերմակ գէս ,
Ճօճայ ծըփայ՝ որպէս հեղեղ փրփրադէզ
Իջանելով ի ժայռից բարձրր սարէն ,
Վահանն ոսկի՝ յոր աչք յառիւ ոչ զօրեն ,
Ի նիզակէն վիշապաճեւ ահաւոր
Տարածելով ըստուեր ի դաշտ եւ ի ձոր ,
Բանակն Հայոց յետս ընկրկի զարհուրմամբ ,
Որպէս ի ծով շանթ տոարափ կախեալ սմբ ,
Սեաւ ըզգեճունս պիք պայծառ եւ կապոյտ ,
Յորմէ նաւազքն սրակուցեալ փոխշի շոյտ :
Տեսեալ Վահագն ըզքաջարանց տալ հապճեպ ,
Որպէս ցուրտ հողմ աշնան ընդ դաշտ տպալեպ
Ի խոր հովտի զանհիւթ տերեւըս վարէ ,
Բուռըն յարկանէ մեծ ապանգուած ըզքարէ :

Փախստէից ի գլուխ ձգէ օղասար
Որոյ ոչ գրահ գորեն ոչ գէնք ոչ աստար :
Այլ զուր տեղան յաջոյն քարինք մահարեր .
Եւ սրտմտեալ նա դոփէ զոտն անհամբեր .
Ի յօնս նորա ծագէ մրրիկ շանթախայլ ,
Զաշարն սլատէ սեւահոծ թանծր մռայլ ,
Լախել ծախել կամի զաշխարհ ամենայն ,
Առիւծ օրէն որոտալով յահեղ ձայն .
« Ո՞ւր ես Վըշտասսզ , գոչէ , Պարսիկ ժանտ հրէշ ,
Ե՛կ ըզմարմին քո բիրտ արկից շանց ի գէշ : »
Զայրանալով Բար ընդ զօրացըն վախուստ
Եւ վաղանցիկ ընդ յազթ ու թեանըն կորուստ ,
Թէպէտ տըկար քան ըզՎահագն այլ հըսարտ ,
Ըզդէմս ի գրահ ծածկեալ դիմէ յանհաշտ մարտ ,
Եւ ճակատի ընդ հարազատն իւր խիզախ :
Անդ ըզմիմեանքս նիզակօք շախեալ նախ ,
Բախեն ուժ գինս ընդ ուռուցիկ ամուր լանջ ,
Ի հարուած ոցն հատանին կայծք եւ ճաճանջ :
Ոչ նիզակօք օգտեալ բազկօք նկրտին ,
Եւ ըզմիջով վարեալ միմեանց՝ ի գետին
Թաւալին զոյգ , որպէս մայրիք ամուսն բարք
Եւ բարծրացօնք՝ տասպաստ անկեալք շանթահարք :
Վահագն աշխոյժ յտաին կացեալ ըզուսեր
Մըխեալ ի սիրտ Բարայ մահու բանայ վէր .
Եւ երբ վրիժուք կոյր՝ շարժելով զաջն հզօր
Փութայ եզբօրն ի ճակատ տալ հարուած նոր ,

« Վահագն , ասէ կիսահագագ ճայնիւ Բար ,
Ոչ շատանաս արեամբ . . . անդուժ դու ցայսչափ . . . »
Եւ բանալով ըզդէմն , զոգին արձակեաց .
Սարսի Վահագն . անկանի սուր ի ձեռաց .
Տեղի տայ վրէժ ցաւոյն , գոչէ յուսահատ .
« Զինչ գործեցի , դու Բար , դու ինքն հարազատ ,
Վայ ինձ եղբայր , վա՛հ մեռանիա դու եղո՛ւկ ,
Վայ ինձ , անէ՛ծք յիմ գլուխ , անէ՛ծք յիմ բազուկ .
Քան ըզգազան վայրի եղէ ես անդուժ ,
Ո՛ր ցաւ սըրտիս , ո՛ր արտասուք անօգուտ ,
Եղեոն ահեղ եւ սորջումն անազան .
Անէ՛ծք , անէ՛ծք . . . լաւ է ինձ մահ եւ արժան
Քան թէ կրել ի ճակատու նախատինս ,
Քան թէ յամօթ կեալ յապագայս եւ յողինս . »
Եւ հեծելով հեղու արտօսը յորդաբուխ .
Յեղբօրն արիւն խառնէ զգանգուրս քաջաթուխ ,
Թառալելով յերկիր ի յանձն իւր քարշի ,
Եւ առ ցաւոյն կրճէ զաւազ եւ զփուշի .
Եւ մտաթափ ապա ընդ դաշտ , ընդ անտառ
Վազէ անդուլ թափառական՝ շնչաստարտ ,

Մերձ էր գիշեր եւ յԱնահտայ սուրբ անձաւ
Հսկէր Անոյշ առ հէք որդւոյն անկողնաւ ,
Զի կեայր Արբակ , այլ կեանք նորա էր ցաւոց .
Սպեղանեաւ սրտեալ ըզվէրսն եւ զխոց ,
Ըզկուրծ բախեալ հեկեկելով նորա մայր ,

Մերթ արտասուէր , մերթ աւազանըս կտրդայր ,
Հարցանելով Արմոգայ՝ շուրթըն դողդոջ ,
« Իսկ Մերովեայ ընդէր ըզձայն լեմ ոչ ,
Զի՞ համբուրել զիս յապաղէ եւ գրկել .
Ահ հատանին եղնւկ աղիք իմ գել գել ,
Գուցէ՞ եւ նա է ի դաշտի անդ անկեալ
Կամ գերեցեալ ի թշնամեաց ձերբակալ .
Աւաղ քեզ դուստր իմ քնքուչ , դուստր իմ անմեղ... »
Եւ աստանօր յանկարծ հնչեալ շփնդն ահեղ ,
Դըրդելով հիմն անձաւին եւ կամօր ,
Կերկերէին արծաղանդք խուռն՝ անյարմար ,
Դիմէ Արմոգ ճեպով ի սար բարձրադէտ ,
Եւ տեսանէ ամբոխ խուժից վէտ առ վէտ
Որ ընդ երես երկրի սուրան ցիր եւ ցան՝
Լայնածաւալ որպէս հեղեղ կամ յորձան ,
Վառեալ ջահիւք , զինեալ վրիժուք , սուսերբ , հուրբ
Գան զԱնահտայ ծախել վատնել զանտառս սուրբ ,
Եւ խոխողել ըզմանկըտին եւ կանայս .
Ի խաւարի մղէր Վշտասպ ըզկոյր Հայս
Յարիւն , յեղեռն , յատելութիւն անողոք ,
Բորբոքելով ի բարկութիւն մեծ՝ Արմոգ
Աղէկիզեալ ոգւով , անկեալ ի յերկիր
Աղաղակէ գոչէ առ Դիս վրէժխնդիր ,
Բազկատարած , եւ անյողդողդ ի հաւատ ,
Խաղան յաչացն արտասուք ջերմ եւ առատ ,
Յամուարչտաց ի գլուխ վրիժուց ձեր շանթիք ,

Յանկարծաւհաս զխորդ տեղան , անմահ Դիք ,
Ահա Մասիս զամպրոպային շարժեալ զլուխ ,
Թունդ որոտայ արձակելով թանճր ծուխ ,
Բոց բարձրանայ յերկինս պտոյտ ի պտոյտ ,
Պատառին ժայռք եւ պայթելով քարանց կոյտ ,
Սլանան յօդս աղեղնածեւ , լուսագէս .
Սոււր ճիւղաղաց սլար կապկելով եւ հանդէս՝
Ի մէջ ծխոյն ճիչ ամբառնան ահաւոր .
Մրրկալից շառաչէ հողմ , հեծէ ձոր ,
Հեղուն զեղուն հրեղէն հեղեղք եւ ալիք ,
Տատանի դաշտն , արմատախիլ են մայրիք :
Զամբոխն յայնժամ պաշարեալ սուգ եւ սարսափ .
Բաջ յիմարեալք , զինաթափուր , գունաթափ .
Դէս երեսաց իւրեանց խոյս տան մաղասուր :
Վշտասպ ինքնին հապճեպ փախչի թաքթաքուր ,
Կաշկանդելով զերկարին ի նուս ձիգ՝
Գերի վարեալ , զՄերովէ գեղեցիկ :

Ե Ր Կ Ն



Ահա զիշեր մերկանայ սեաւ ըզհանդերձ
եւ Արմաւրայ ցըցին պարխսաք բարձրաբերձ .
Ըզհետ ամսոց ծածկի արեւ սգաւոր .
Հեծեն կոծեն հողմունք ի դաշտ եւ ի ձոր ,
Մառախլապատ են բուրաստանք վարդազեղ ,
Թռչունք ի բոյնս ասպստան ոչ տան գեղգեղ ,
Ի քաղաքին անկեալ են յոյգք եւ շրիտթք .
Հայք փախստեայք՝ ամօթապարտք եւ երկչոտք
Թաքչին՝ ի մարց եւ ի հարսանց սիրասուն
Ժառանգելով զարհամանաց վատ անուն ,
Ըզպատմունճան իւր պատառեալ , յուսահատ ,
Տխուր դիմօք , մոխիր ածեալ ի ճակատ ,
Կեղծապատիր , վշտասալ , առեալ կերպարանս՝
Տարտամ ուղղէ զսոն յարքունի ասպարանս .
Բազմեալ ի դահ՝ Տիգրան վեհազն ալեհեր ,
Երկրապլիչ , յաջ իւր յեց ըզգլուխըն խորհէր ,
Ի վեր եկաց եւ ակնարկեալ ակամբ շեղ ,
« Զըւսն Պարսիկ , գոչէ ի ձայն մեծ ահեղ ,
Գոյժ որախսի , որախսի այս հնչէ բօթ .

Տեղի ետնոր , ով նենգաւոր անամօթ ,
Անվարժ զօրու , մատաղ կուսից եւ տկար .
Աղէ՛ սնդեան զմէջ քո եւ տնօր ինձ համար : »
« Ըզբարկութիւն ցածո՛ սըրտի քո արքայ ,
Ասէ՛ Վչտասայ , դարուց ի դարս ասլադայ
Ծաւալեսցին փառք քո իբրեւ զալիս յորդ .
Անկաւ Արբակ , ասլտամբաց առաջնորդ ,
Մերովէ քոյր նորա հեծէ ի շղթայս ,
Եւ դիակունք Մարաց ծածկեն զափափայս :
Մինչ անվեհեր Հայք դիմէին , արքայ քաջ ,
Եւ յաղթութիւն դնայր զինուցն ընդ առաջ ,
Ըզհրմայս ծերն Արմոզ կարդաց , լ'անդէն խումբ
Սեաւ ճիւաղաց ժայթքելով հուր եւ ծըծումբ ,
Ըզքաջագունս քո վանեցին ցիր եւ ցան ,
Որք զարհուրեալք յուսաբեկ յետըս դարձան : »
« Միթէ՞ ճգնեւ ճգնիս , Պարսիկ՝ ժանտ ոսոխ ,
Ասէ՛ Տիգրան , առնել ըզփառս ոտնակոխ .
Ցաւ է ինձ յոյժ քաջաց խնոց մահ անսարտ
Որք փայլէին երբեմն ընդ իս յահեղ մարտ .
Իսկ ո՞ւր է Բաբ . իշխեսոց եւ նա իբրեւ վատ
Փախատական դառնալ . . . կնճռես ըզճակատ .
Ընդէ՞ր ոչ տաս սլտոտախանի , ճն աղէ՛ ,
Սոսեանց , առիւծն իմ Բաբ՝ որդեակ իմ ո՞ւր է » —
« Եւ զիսորդ տաց սլտոտախանի , տէ՛ր . սարսափ
Մարտից , կայծակն Հայկազանց , ոչ եւս է Բաբ » :—
« Եղո՛ւկ քեզ Բաբ , խաւարեցար ինձ որդեակ ,

Թո՛ղ խաւարէր իմ ձըմեռան արեւակ .
Յառաջ քան զիս հասեր առ Հայկ եւ Արամ .
Եղո՛ւկ քեզ Բար , եղո՛ւկ եւ ինձ որ ողբամ , —
Լռեաց , եւ վիշտ ի սիրտ այլ դէմք անխոով ,
Կոչեաց ընդ փոյթ զաւագորեարն ի ժողով :

Անդ ի կապանս ըզ Մերովէ եւս ամին .
« Մատիր ասէ արքայն , աղջիկ փափկած ին ,
Մատիր , ի դուժ շարժեն զիս ծանր այդ շղթայք ,
Օրէնք մարտի . եւ հի՛մ ի գէն վառեցայք ,
Հէք դուք , ո՞ դձեղ նեղեաց , ո՞ շար ինչ արար .
Ոչ տանէի միթէ՞ խնամս հայրաբար » :
« Որ հայր , ասէ կոյսըն , դաղան արխնուչտ
Ոչ առ սրդիս յըղէ , հայր՝ չես դու անշուշտ .
Շուրջ զաթուաւ ձեր պաշարէ սեաւ կասկած ,
Հառաչանաց դուք եւ ողբոց անզգած ,
Ի հաստատել զիշխանութիւն զանըստոյդ ,
Յանողորմ մահ զոհէք ըզձեր եւ զառոյդ .
Մահ են օրէնք եւ դատաստան արքայից ,
Զիւ՛րդ քեզ այժմ՝ յանօգուտս յայտ արարից
Ըզմեր առ ձեզ հնադանդութիւն եւ ըզսէր .
Հաւատայցես ինձ , ո՛չ , արդ մի՛ յապաղեր ,
Զոր առնելոց ես արա՛ , մահ եւ ինձ տո՛ւր » : —
« Զիւ՛րդ յանդուզըն բարբառէ , արքայ , լու՛ր ,
Ասէ Վշտասպ , աստտամբք են այ՛ն Մարք .
Թէ ըմբոստք այսքան դստերք , զի՛նչ հասլա արք .

Մի գութ տանել, տէր, ապերախտ այս ազգին՝
Եւ Մերովէ յայնժամ գոչէ զայրագին,
« Աղետաբեր Պարսիկ, խարդախ խարեբայ,
Եւ Կիւրոսի կամաց գործի, վատ ծառայ,
Առ բռնաւոր արքայդ փութա՛ տանել դարձ,
Փութա՛ խնդրել ընենցութեանց քոց ըզվարձ.
Պատմեա՛ նմա թէ Մարազանց հէք ժառանգ
Վերջին անկաւ, արդ տիրեսցէ անվտանգ.
Ահ՛ ձեզ լիցին իշխանութիւն փառք եւ դահ,
Եւ տուք զեղբայրն իմ ինձ կամ տուք ինձ ըզմահ՝—
Յայնժամ թորգում՝ խորհրդական արքայի,
« Զաշխարհ Հայոց, ստէ, առնել ամայի,
Ջնջել ըզփառս եւ խորտակել զօրութիւն,
Ըզգաշտ՝ գանտառս փոխել յաւեր եւ յաճիւն,
Հնարս գործեաց Վչտասսս՝ ի սիրտ հարեալ ծափ.
Եւ զԱրտաշիր, զԱրբակ ինքնին եւ զԲաբ,
Թաքնախորհուրդ բորբոքելով ի մի դաւ,
Յղեաց ի մի մարտ՝ ի մի մահ անիրաւ:
Լուր ինձ, արքայ, եթէ սուսերդ այդ կամի
Ըզվրէժ լաւ եւ որդւոյդ, ահա թշնամի՝
Ահա Վչտասսս անհաշտ եւ վատ խռովարար.
Այլ խնայեա՛ անմեղ կուսի եւ տկար,
Ո՛հ խնայեա՛, տէր, եւ դարձն՝ զՄերովէ
Առ թշուառ մայրն որ յուսահատ արտասուէ՝—
Գալարելով, խածատելով ըզմատունս.
Ափ ի բերան Վչտասսս հեղոյր ցուրտ քրտունս.

Յոյզ ի խորհուրդ Տիգրան ինքնին վարանէր ,
Ասէ ասրա . « Արհամարհեալ զիմ պատուէր ,
Թէ պատրանօք եւ սիրտ վառեալ ի նախանձ ,
Զարեւ հատեր առաքինի դիւցազանց ,
Վայ քեզ Պարսիկ տիրամասնիչ եւ դժբող ,
Պատառեցից սեաւ նենգութեանց քոց ըզբող ,
Եւ տուժեսցես երդնում զանպարտ արեանց զին» :—
Եւ Մերովեայ որ հեծեծէր լալագին ,
Ըզկասպ բազկացն ի բաց առեալ՝ հրաման տայ
Ածել լիակել ի տաճարին Անահտայ ,

Ի սար լերին՝ ի քաղաքէն մեկուսի
Տաճար կանգնեալ է Անահտայ սուրբ կուսի .
Ընկողմանեալ են պահապանքն ի խոր քուն ,
Այլ Մերովէ հսկէր տրտում եւ արթուն .
Վարսքն հողմածուսի , ձեռք ի ծնօտ՝ վշտահար ,
Մերթ կողկողէր , եւ մերթ երգէր յաղու լար :

« Թմբրեալ ահա երկիր , հողմունք եւ այերք
Ննջեն հովիտք , ննջեն անտառք եւ տարերք ,
Մարդարտաշար սահին երազք զուարթուն՝
Սէր կազդուրի , կեանք ճոխանտն հեշտ ի քուն ,
Մինչ ես մենիկ նստեալ հեծեմ սիրտ ի սուգ ,
Եւ դառնահոս խաղան յաչացս արտասուք :
Ո՞ւր են իմ քորք , ո՞ւր իմ ընկերք սիրական . . .
Քաջ քաջ կռուեալ , զարիւն հեղին եւ անկան .

Անկան զուարթ՝ մնչեալ շրթամբ դողդոջուն
Եւ ի մահուն զազատութեան քաղցր անուն .
Քաջ քաջ մրցեալ անկաւ եւ իմս հարազատ ,
Վասն Հոյրենեաց անկաւ ուրախ եւ ազատ ,
Ո՛հ երանի դիւցազին բիւր երանի ,
Փառք են զլխոյն , փառք են անմահ Հովանի ,
Այլ ես մենիկ նստեալ հեծեմ սիրտ ի սուգ ,
Եւ դառնահոս խաղան յաչացս արտասուք .»

Որպէս ալեաց քաղցրիկ մրմունջ հեռաւոր ,
Մինչ ձայն նորա հնչէր ի բլուր եւ ի ձոր ,
Յանկարծ ահա նժոյգ դիմեալ գայ անսանձ
Ծուխ հրախառն արձակելով ի սնդանց .
Փայլին աչկունքն բոցածօճ ի մթան ,
Դոփէ , դափրէ , դղրդին դաշտք եւ թնդան .
Ոսկեկազմ են սպասք նորա եւ ունի
Ի ճակատուն նշան զինուց Վահագնի .
Խինջելով խայտայ կայտուէ մէտ առ մէտ ,
Եւ ծածանի բաշ նորա ճոխ վէտ ի վէտ .

« Մի՞ գոյժ առնել առաքեցար ինձ արդեօք ,
Տարակուսեալ հարցանէր կոյսն անձկանօք ,
Յո՞ր վայր դիմես , Սեւակն ազնիւ մտերիմ .
Եւ ո՞ւր Վահագն , ո՞ւր է անյաղթ դիւցազն իմ .
Յո՞ դիմես՝ սանձ թափուր , եւ զի՞նչ նոր արկած ,
Ո՛հ պակասէ սիրտ իմ պատեալ ի կասկած .

Գաւաճանեալ նախանձուն վառ եւ անզօր՝
Միթէ՞ Վահագն, եղո՛ւկ, անկաւ վիրաւոր.
Եւ ոչ տանի նմա գթած ոք խնամ,
Ոչ ըզնորա վէրս սպտեն ձեռք բարեկամ,
Ոչ ոք գլխտին հագագ շրթանցըն քաղէ.
Տա՛ր գլխ Սեւակն առ սիրելին իմ աղէ՛.
Ոչ եւս արտօսը, յիս վրէժ եւ սէր բորբոքին, »

Զայս ասելով սլանայ ի նուս նժուգին,
Որ մնայր կազմ գճելով զուտն հնազանդ.
Ըզբաշ ցցեալ ապա ընդ ձոր՝ դարեւանդ,
Ընդ դաշտ՝ անտառ արշաւասոյր ընթանայ,
Մինչ հասանէ յեզըր ծովուն Սեւանայ :

Սուզեալ արեւ ի ծով ամպոց ոսկեզօծ,
Տարածէին յերկինս ըստուերք թանձրահոծ.
Իրբեւ խոնաւ շունչ անտառաց եւ հովտաց՝
Փչէր հողմիկ եւ անցանէր սրընթաց :
Եւ երթայր ոմն՝ հերք եւ ալիքն արծաթի,
Պարածածկեալ սեաւ զգեստիւք երկաթի,
Ակնկորեալ, սեաւ ագուցեալ գլխանոց.
Էր ընկղմեալ յոյզ ի ծփանս խորհրդոց,
Գեղասպատշաճ եւ անդամովք համեմատ,
Այլ գէմք տրտում եւ խորչք փորեալ ի ճակատ,
Եւ երթայր քաջն, ըզհետ նորս զինակիր
Նիզակաւոր, սկայ մրցող եւ ընտիր :

Անդ տարածէր հովանաւոր դաշտավայր
Որ սլարսպեալ իմն ի լերանց բարձրածայր ,
Ստորոտովքն ականակիտ աղբերք զով
Ընդ ձոր հովիտ կարկաջասահ սողալով .
Եւ անդ նստեալ գուսանք Մարաց սգաղգեաց ,
Կողկողելով լային ըզմահ սիրելեաց ,
Եւ ըզբամբիռն՝ ի ձայն սղբոց լալաղին ,
Լերինաթինդ հնչեցուցեալ երգէին :
Յառաջ անցեալ Առաիկ՝ աշխոյժ քնարահար ,
Ըզ՛լարբակայ երգէ զանկումն յաղու լար : —
° Որդիք սգոյ , անտառք , հողմունք եւ այերք ,
Նուագեցեն ըզմեռելոց տխուր երգ ,
Զի զ՛լարբակայ մահ վճռեցին անգութ Դիք .
Ողբասցեն կոյսք , սուգ առցեն ծերք եւ որդիք ,
Լերինք միմեանց ահեղական տացեն գոյժ ,
Զխորդ անկաւ հաստաբաղուկ քաջն աշխոյժ :
Ի դաշտ մարտի , յարի արանց ասպարէզ ,
Ոչ էր հզօր ոք , ՛լարբակէս , քան զքեզ .
Երագավազ սրուէս թեթեւ եղջերու ,
Սհաւոր՝ զերթ գիշերոյ բոց երկնաչու ,
Իբրեւ զկայծակըն շողայր սուր քո ահեղ ,
Զայն քո հնչէր զարնանազայր իբր հեղեղ :
Բայց յորժամ դարձ ի մրցանաց առնէիր ,
Դէմք քո սլայծառ եւ էր ժպիտ քո կարմիր ,
Որսլէս արեւ յետ մրրկաց շողալով ,
Կամ յետ հողմոց որսլէս խաղաղ ծփայ ծով :

Եւ այժմ աղեղնըդ զորմով է կոխեալ թոյլ ,
Եւ ժանդոտեալ արեամբ՝ սուսերդ ոսկեծոյլ .
Մթին այժմիկ է գերեզման քո եղնկ ,
Երիւք քայլօք չափենն ըզփոս քո անձուկ ,
Ո՛վ դու որ այնքան մեծ էիր եւ հզօր .
Շիրիմդ ահա՝ տերեւաթափ սօսի չոր ,
Սիրող մարտից եւ դիւցազանց դու յաղթող ,
Ահա վէմ՝ ցուրտ ծածկոց , փառացդ է կոթող ,
Զոր կոխեսցեն անտարբեր ոտք որսորդի
Ոչ յիշելով թ' էիր զինուց դու որդի .
Այլ յիշեսցեն գուսանք զանուն վարբակայ ,
Եւ յիշեսցեն ըզփառսըն դարք սպազայ .
Որդիք սգոյ , անտառք , հողմունք եւ այերք ,
Նուազեսցեն ըզմեռելոց տխուր երգ : »

Լուեաց գուսանն , այլ երգ նորա մեղրածոր՝
Զարտօսր յաչաց քամեալ , ըզսիրտս յուղէ խոր .
Արբակ ինքնին փղձկեալ ոգւով աղէխարչ ,
Յեց յուս քաջաց խրոց՝ տարտամ ոտն ընդ քարչ ,
Գայ համակիլ անդ ընդ գուսանս ողբասաց ,
Մոռանալով զանհնարին ցաւ վիրաց :
Իսկ սեւազգեստ քաջն ի բացէ , լուլեայն ,
Յոտին անչարժ ուշիւ դիտէ զամենայն ,

Եւ աստ ելեալ Յուսակ՝ քնար ի ձեռին ,
Երգէ անոյշ , սիրով աչկունքըն վառին : —

« Քաղցր է այգուն մրմունջ ալեաց մեղմածուփ ,
Քաղցր է հողմոց շունչ որ դգուէ զվարդաթուփ ,
Վտակաց քաղցր է ի ժայռից դնդճէլ ,
Այլ երգ մահու սիրելեաց՝ քաղցր առաւել :
Օ՛ն հնչեացեն բամբուռնք , ցաւոց սփոփանք ,
Եւ շարժեսցին սնարք մահու եւ դամբանք :
Ահա ի խոր հովտաց , ի ջուրս ծիրանի ,
Նշոյլ բոցոյ բեկբեկելով ծածանի՝
Թափ ընդ միգաց անցեալ կապոյտ վարագոյր .
Այդ քո հոգեակ է , աստեղաց անմահ քոյր ,
Կոյս փեղխմա , այդ քո հոգեակ է մաքուր
Որ խառնելով ընդ ամալ , ընդ հողմն եւ ընդ ջուր ,
Ըզսիրելեաց կամի առնուլ ըզկարօտ :
Ո՛վ կոյս՝ չքնաղ որպէս դարնան առաւօտ ,
Գողտրիկ էիր որպէս լուսնի փափուկ լոյս .
Ժպիտ քո թարմ էր քան ըզվարդ նորարոյս ,
Քան ըզչուշան հովտաց էիր սպիտակ ,
Ծաւի աչիունք՝ որպէս ալիք կապուտակ .
Ի սէր ուխտեալ՝ էիր համեստ եւ զգաստ ,
Եւ հարսնացար կարմիր յարեան յառազաստ :
Ըզսէր , ըզգեղ քո լացցեն մարք եւ կուսանք ,
Եւ ողբասցեն ըզմահ քո ծերք եւ գուսանք .
Յարիւն , յարտօսըր փոխեսցին գետք պայծառք ,
Եւ հեծեսցեն յողբ մեծ հողմունք եւ անտառք :
Հնչեսցեն միշտ բամբուռնք՝ ցաւոց սփոփանք
Եւ թնդասցեն թմբուկք , սգոյ արձագանգք : »

Յայսիւայր միայն գուսանն երգեաց դիւրաւաչ,
Զի դայր Անոյշ տարտամ գնացիւք եւ դանդաշ,
Աչք երկապիշ եւ հերարձակ, դէմք գունատ,
Յնորայոյզ եւ վիշտք դրօշմեալ ի ճակատ.
Եւ էր չքնաղ սլատկեր ցաւոց՝ տրտմութեան,
Իբրեւ լուիկ եւ սպիտակ ուրուական:
Իսկ մեկուսի, ծածկեալ ըզդէմն՝ վեհ սկայն,
Յոտին անշարժ, լուիկ դիտէր զամենայն:
Եւ անդ նստէր Անոյշ այսպէս երգելով.
« Թէ մեռելոց, դու հոգմիկ, շունչ իցես զով,
Ե՛կ զիս գգուել, եւ արկ զինեւ թմբիր հեշտ:
Փառք եւ հաճոյք աշխարհի, տամ ձեզ հրաժեշտ.
Մի՛ հեծեճէք, անտառք... գուսանք, լուռ լերուք.
Փախեան ժսլտք իմ եւ հատան արտասուք.
Եհաս մրրիկ եւ խորտակեաց զհոգւոյս լար,
Եհար խորշակ, տերեւաթափ զիս արար.
Եւ թառամեալ են իմ ծաղկունք ցօղասուն,
Զոյգ շառաւիղք վիշասպազանց ազազուն.
Եւ արդ հրճուին ի սիրտ իւրեանց օտխք մեր:
Գայցէ պանդուխտ խնդրել ըզմեզ անհամբեր,
Եւ գտցէ լիկ խոնաւ հովտին անդ ի խոր
Յուրտ գերեզմանս ընդ տերեւօք ծածկեալ չոր...
Թէ մեռելոց, դու հոգմ, իցես շունչ թեթեւ,
Ե՛կ զիս գգուել, եւ արկ թմբիր հեշտ զինեւ: »
Յայնժամ Արմոգ յանձն իւր խռովեալ եւ հոգին,
Փութայր հիբին խնամ տանել ցաւագին.

Եւ ամբարձեալ ասպա դբադուկս իւր ի վեր ,
Աղաղակեալ սլաղատելով արտասուէր :
« Եւ մինչեւ ցերբ գոյժ հնչեսցէ , անմահ Դիք ,
Եւ մինչեւ ցերբ բարձրասցին ողբք եւ լալիք .
Ճիշ յուսահատ եւ հառաչանք աղէկէզ
Ի խոր քնոյ զարթուցանե՞ն ոչ զձեզ .
Անմեզ ձեռաց ահա որդւոց հնազանդ՝
Չուլել կամին ըստրկութեան շարաւանդ .
Եւ տեսանէ՞ք զայս եւ թուժա՞յք , Դիք հզօր :
Ո՞ւր են շանթիք ձեր բարկութեան ահաւոր .
Եւ հանապաղ վըշտասալ ի դաւ մտադիւր ,
Ընդ կոտորած մեր սլարձեսցի՞ ի սիրտ իւր .
Մի Պարսկին մի յաջողեսցի սրողայթ ,
Օ՞ն ծագեցէ՞ք ի մեզ սիրոյ ճառագայթ .
Ծաւալեցէ՞ք , ս՛վ Դիք , ահնարկ զթութեան ,
Ի հաշտութիւն յորդորելով ըզՏիգրան .
Բաւախան , Դիք , այսքան արտօսք եւ արիւն ,
Շնորհեցէ՞ք մեզ հաշտութիւն , հաշտութիւն : »

Ընդ զառ ի վայր լերին , հովիւ խաշնարած
Իջանէ՛ ցուսլ ի ձեռին , դէմք փոշեզգած .
Տեւտէոս է որ Մերովեսոյ ի խնդիր
Այսպէս ծպտեալ ձեպէ գնաց անձանձիր ,
Փութան խոնին Մարք ըզնովաւ միահոյլ ,
Ուրախութեան ծագեալ ի դէմուն նշոյլ .
Աճապարեալ վազէ Անայշ եւ դոջէ .

« Տեւտէոս , ո՞ղջ է , ասա՛ , դուստր իմ ո՞ղջ է : »
Իսկ սեւաղգեստ քաջն ի հեռուստ , լռելեայն ,
Յեց ի նիզակ , անշարժ դիտէ զամենայն ,
« Բազում , ասէ Տեւտէոս , ժամրս բազում ,
Ընդ ձոր՝ անտառ ընթացեալ խոնջ եւ տրտում ,
Եւ Սեւանայ ծովուն հասեալ իմ յեզերս ,
Տեսի նժոյդ սրանալով ընդ այերս ,
Ի նուս տարեալ ըզՄերովէ , սփռեալ շուրջ
Լոյս եւ ճաճանչ , եւ սլատէի ես յանուրջ ,
Գօտի ամէր խոնաւ ափանց թանձր շամբ ,
Ուր հեծեծէր հողմ ներդաշնակ շառաջմամբ .
Իբր աչք ծաւի ընդ կամարօք յօնից թաւ ,
Ժպտէր ծովակն ընդ եղեգանց հովանեաւ .
Թաւալէին կապոյտ ալիք ման ի ման ,
Մանչելով ի հեշտ նուազ անսահման :
Շողայր սողայր կայծակն յերկնից մութ կամար .
Եւ Մերովէ արձանացեալ յերիւար ,
Դիտէր , պակնոյր , ծփայր յերկիւղ եւ հաճոյս՝
Ընդ փայլակուենս ի սիրտ նորա ծագեալ լոյս :
Իսկ յանդնդոց բարձրանալով ձայն անհուն ,
Զարթուցանէր տիեզերաց զոգի՛ քուն .
Եւ մերթ ընդ մերթ ցրուեալ գիշեր սեւայօն ,
Լոյս ընդ ստուեր մրցեալ՝ պարզէր հորիզոն :
Յայնժամ յուղեալ երկնէր երկին եւ երկիր ,
Երկնէր եւ ծով ծիրանածայր ի բիւր ծիր .
Երկն ի ծովուն զեղեգն ունէր կարմրորակ ,

Ընդ եղեգան ծուխ ելանէր կապուտակ ,
եւ կապուտակ փող ելանէր ի ծխոյն .
Ընդ եղեգան բոց ելանէր դունագոյն ,
եւ ի բոցոյն պատանեկիկըն վազէր ,
Նա բոցերանգ ունէր մօրուս եւ հուր հեր .
Աչկունքն էին արեգակունք սիրավառ ,
Աչկունքն էին աստեղունք մեծ եւ պայծառ :
Եւ էր ծնունդ երկանց երկնից եւ ծովուն ,
Վահագն անմահ , դեղահասակ դիւցազուն .
Եւ ի բոցոյն յայտնէր ի փառս երկնային ,
Զէնք եւ զրահքն արփիահրաշ ցոլային .
Եւ Մերովէ ծփայր յերկիւղ եւ հաճոյս
Եւ ի ճակատ նորա ծագէր շող եւ լոյս :
Ճախրէր Վահագն , հոլաթեւէր երկնաչու ,
Երգէր ի սէր , երգն էր անոյշ եւ աղբու .
Եւ ի բոցոյն իբրեւ հրեշտակ երեւէր ,
Աջ կարկառէր կուսին , կարգայր հրբաւէր ,
Քողարկելով ըզնա յամպոց հովանի .
Եւ հաշտ երկին , եւ հաշտ էր ծով ծիրանի : »

Սեւազգեստ քաջն յառաջ անցեալ նոյնժամայն ,
Բացեալ ըզդէմս՝ ասէ . « Լուսյ զամենայն ,
Հաշտութիւն , Մարք , Հաշտութիւն . ես Տիգրան եմ .
Երդնում ի Դիս անմահ , երդնում յարփուոյն դէմ ,
Զքրաւամահ քաջաց արեան փոխարէն՝
Հատուցանել Պարսկին զարժանն եւ զօրէն ,

Որ զչարութիւնն առադաստեալ ի ներքոյ
Դաւեղ խորհէր Կիւրոս՝ ի ձեռն սիրոյ ,
Ոչ ի բազուկ եւ ոչ ի տէգ ասպատան ,
Մի՛ յանգ հանցէ զխորհրդոյն նիւթ կատարման ,
Հաշտութիւն , Մարք , վկայ երկինք , վկայ Դիք ,
Հաշտութիւն . ես ձերպաշտպան , դուք ինձ որդիք .
Օ՛ն անդր ի մէնջ հալածեսցի հեռ նախանձ .
Քաջք ձեր՝ ընկերք լիցին քաջաց Հայկազանց ,
Արեւ Հայոց եւ երկին ձեզ լիցին հաշտք .
Մեծի լերին արեւելեան թիկանց՝ դաշտք
Որ առ եզերք գետոյն , այգիք արգաւանդք ,
Զեզ տուեալ Մարք , ջուրք , բուրաստանք եւ մար-
[մանդք ,
Եւ դաստակերտքն Ոսկիողայ եւ Տամբատ ,
Իշխան կարգեմ զԱրքակ՝ արեաց պոյազատ .
Եւ Վահագնի հարազատիս կրտսերոյ ,
Ի նշան այս ուխտի դաշանց եւ սիրոյ ,
Ըզմերովէ կոյսն աշագեղ՝ հարսն ամեւ
Արքունական յառօք որպէս է վայել ,
Այս կամք սրտիս եւ այս երկնից է պատգամ : »
Ըրնդարմացեալ Մարք եւ Արմոզ ծերն անգամ ,
Յերկիր խոնարհ՝ փարեալ զտիւք արքային ,
Եւ ջերմ մաղթանս բղխեալ՝ զուարթ կարգային .
« Կեցցէ՛ արքայ , կեցցէ՛ արեւ ըս յամայր : »
Եւ զինակրին դարձեալ՝ Տիգրան հրաման տայր .

« Զայն տուր անէ քաջաց իմոց դալ ան իս ,
Զայն տուր Հայոց եւ Հաշտութեան աւետիս : »
Ի փորոտալ փողոցն հրաւեր հաշտարար ,
Սուռն ամբոխիւ ճեպէր Հայոց քաջորեար ,
Զինազարդեալ եւ դրօշ պարզեալ լուսաթոյր ,
Դրկախառնէր ընդ Մարաղունս ի համբոյր ,
Ուրախ բարբառ հնչեցուցեալ մեծագոյ .
Եւ մանկուհիք խայտալով՝ սիրտ ի թնդոջ ,
Ի գլուխ քաջաց սիռէին փունջրս վարդից .
Մերք՝ օրհնութիւն նուագէին անմահ Դից .
Արք փայտակոյտս յօրինէին բարձրագէզ ,
Սեղանս կազմեալ՝ զեզինս ածեալ ողջակէզ ,
Եւ վառէին խարոյկք մեծաւ ճարճատմամբ ,
Բոց բարձրացեալ , ծուխ տարածեալ իբրեւ ամբ .
Նիզակ ճօճեալ՝ քաջք կայթէին ոտն ի պար .
Եւ սիրաճայն երգէին կոյսք թմբկահար .
Յայնժամ կրկին երկնէր երկին եւ երկիր ,
Երկնէր անտառն եւ արձակէր բոց կարմիր .
Երկն ի բոցոյն զեղեգն ունէր ըսպիտակ ,
Ընդ եղեգան ծուխ ելանէր կապուտակ .
Եւ ի բոցոյն կոյս Մերովէ՝ աչք պայծառ ,
Հոլաթեւէր եւ ծիրանի ունէր վառ .
Ի վարդ չրթանց տեղայր ժպիտ եւ համբոյր ,
Ի համբուրիցն հոտ ծաւալէր քաղցրաբոյր .
Եւ ի բոցոյն պատանեկիկըն վազէր ,

Հեծեալ ի սեաւ նժոյգ , նա բոց ունէր հեր՝
Եւ բոց մօրուս , աչիւնքն էին իբր արեւ :
Եւ ի բոցոյն դառնայր նժոյգն օձաձեւ ,
Զգեալ ի տուտն ագւոյ ղ՛լչտասսլ խարերայ ,
Ի քարչ վարեալ ըզդին ընդ ժայռ՝ ամափայ .
Եւ ի բոցոյն վահագն յայտնէր վրէժխնդիր ,
Հաշտ հայրենիք , հաշտ էր երկին եւ երկիր :



97

